№ 81 ԿԻՐԱԿԻ, 19 ԱՊՐԻԼԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 19 ԱՊՐԻԼԻ № 81

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ՍՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ:

Պրեմիաներ «ՄՇԱԿԻ» տարեկան բաժանորդները, որոնք 1915 թ. ընթացքում լրիւ վճարած կլինեն 10 ր. բաժանորդավճարը, կը ստանան որպէս պրէմիա հետևեալ նոր լոյս տեսնելիք գրքերը. 1) «Տանջվածը»—մեծ վէպ Շահրիարի հայկ. յեղափոխ. կեանքից, 2) «Հայկական հարցը»—լուսաբանված դոկումենտներով:

ԱՊՍՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՈՆ

սրանով յայտարարում է, որ այսօր, կիրակի, ապրիլի 19-ին, Վանքի մայր եկեղեցում

ՆՇԱՆԱԿՎԱԾ Է ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

վերջերս Թիւրքիայում տեղի ունեցած կոտորածներին զոհ գնացած

ՀԱՅԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Սկիզբն է պատարագից յետոյ ժամը 1-ին.

240. 1—1

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ սրանով յայտարարում է, որ այսօր, կիրակի, ապրիլի 19-ին Վանքի մայր եկեղեցում պատարագից յետոյ կատարվելու է գերեզմանի վրա դպրոցիս բարերար հանգուցեալ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

237. ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳԸ. 2—2

Տիկին ՇՈՂԱԿԱԹ ՉԻԼԻՆԳԱՐԵԱՆԸ՝ իր ամուսնով, զաւակներով և եղբայրներով ու նրանց ընտանիքներով յայտնում է բարեկամներին ու ծանօթներին, որ ներկայ ապրիլի 10-ին Պետրոգրադում վախճանված իր թանգագին եղբօր՝

ԲԺՇԿԱՊԵՏ

ԱՐՏԱՇԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ

յիշատակին այսօր, կիրակի, ապրիլի 19-ին (Թաղման խօթնօրեկին), Քամոյեան եկեղեցում (Դվօրցովայա փողոց) պատարագից յետոյ ժամը 12-ին կը լինի

235. ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ. 1—1

ԶՐԱՀ (ПАНЦЫРИ) ՊԱՇՏՊԱՆՈՂ՝ գնդակից, սրից, նիզակից, սուինից, շրապնէլների կտորներից և այլն: Ծանրութիւնը 6—7 ֆունտ: Գինը 150 ր. սկսած:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Կ. Լ. ԳՐԻՆԲԼԱՏ

Թիֆլիս, Նիկոլայեվսկայա փող. № 84 (Կիրոչնայա փ. անկիւնից՝ 2-րդ տունը), բն. 3, փողոցից, 2-րդ յարկ: Ընդունելութիւնը առ. ժ. 10-ից մինչև երեկ. ժ. 6-ը ամեն օր: Պատասխանի համար—10 կոպ. մարկա:

(Կ.Ե.Հ.Հ.) Խնդրում եմ փորձելու համար գալ սեփական զէնքով: 229. 5—5

Հարկաւոր են ներկայացուցիչներ Կովկասի համար:

ԱՊՐԻԼԻ 26-ԻՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ

„ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆ"

ԹԵՐԹԸ 238. 1—1

ՎՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բարյատինսկայա 13, տելեֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով: Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.:

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց

(Հ. Կ.) ա 970. 100—47

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(ԶՈՒԲԱԼՈՎԻ Ա. ՆՈՒԱՆ)

Այսօր, կիրակի, ապրիլի 19-ին ՀԱՅԿ. ԴՐԱՄ. ԽՄԲԱԿՑ. կը ներկայացնէ առաջին անգամ ԼՐԻՒ

ՆԱՊՈԼԷՈՆ
ԿԱՄ
ՃԱԿԱՏԱԳՐԻ ՄԱՐԴԸ

Պատմ. դրամա 5 գործ. 7 պատկ. թարգմ. Մ. Ստամբոլցեանի:

ԶՈՐՔ, ԺՈՂՈՎՈՒՐԴ և ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ:

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—տ. տ. Աբելեան, Ցասմիկ, օր. օր. Վանեցեան, Քոչարեան, պ. պ. Ամօ-Խարազեան, Աղաբաբեան, Գուրեան, Գուլանջեան, Երամեան, Լազարեան, Աշչեան, Ձոնեան, Մարութեան, Յարութիւնեան II, Ռուսեան, Սերժ և ուրիշները:

Սկիզբը երեկ. ճիշդ ժամը 8-ին:

Ռեժիսոր՝ ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆ

Վարչութեան հերթապահ անդամներ՝ Տիկ. Վ. ՄԱՄՈՒԼԵԱՆ և պ. Ե. ԽԱՐԱԶԵԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԵՐԸ ԵՒ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

(Պատահական հեռագիր)

Մակու, 17 ապրիլի

Այսօր դարձեալ եկան 160 հոգի հայեր Վանից, Բերկրիից, Աբաղայից, Թադէոս Առաքեալի վանքից: Սկսվել է սարսափելի ջարդ: Հայերը Վանում հինգերորդ օրն է՝ պատերազմ են մղում թիւրքերի և քիւրդերի դէմ: Անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն: Աղերսեցէք փոխարքային շուտ օգնութեան հասնել:

Ներսէս եպիսկոպոս

(Պատահական հեռագիր)

Սարիղամիշ, 17 ապրիլի

Սարիղամիշում և Ազդուխանում գտնվող 600 հոգի փախստականները թողնված են անօգնական, անուշադիր: Անհրաժեշտ է անյետաձգելի օգնութիւն:

Տէր-Տաճատ, Մովսէսեան

(Պետ. Հեռ. Գործ.)
16 ապրիլի

ԱԹԷՆՔ.—Կ. Պոլսում կալանաւորվել են հայոց պատրիարքարանի պաշտօնեաներից մէկը և 400 հայեր:

ՍՕԼՈՒՆ.—Կ. Պոլսից տեղեկացնում են, որ Դարդանէլի դէմ վերսկսված պատերազմական գործողութիւնները լուրջ անհանգստութիւն առաջ բերին Թիւրքաց ղեկավար շրջաններում: Ոստիկանութիւնը կալանաւորեց մի հայ հոգևորականի և մի քանի հայերի՝ մեղադրելով նրանց կառավարութեան դէմ ապստամբութիւն գրգռելու մէջ:

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
17 ապրիլի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական: Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Ապրիլի 15-ին հրացանաձգութիւնը Անդրճորոխեան երկրում շարունակվեց:

Օլթիի ուղղութեամբ մեր զօրքերի աջող առաջխաղացումը շարունակվում է:

Մնացած ուղղութեամբ փոփոխութիւն չը կայ:

ԴԱՐԴԱՆԷԼԻ ԵՒ ԶՄԻՒՌՆԻԱՅԻ ՌՄԲԱԿՈԾՈՒԹԻՒՆԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
17 ապրիլի

ԼՕՆԴՕՆ. — «Թայմսին» հեռագրում են Միտիլէնից ապրիլի 16-ին.

Տենէդոսից և Լէմնոսից հաղորդում են, որ Դարդանէլում կիրակի առաւօտից անընդհատ կռիւ է: Անգլիացիք գերել են 1200 թիւրք եւրոպական ափում և 1800 ֆրանսիացիք՝ Կում-Կալէի շրջակայքում: Անգլիական մի ուժեղ զօրաբաժին, ամրանալով Գալլիպօլի թերակղզու ամենանեղ մասում, պաշարել է թիւրքաց զօրամասերին Կիլիդ-Բահրի և Հէլլէս հրուանդանի միջև.

«Դէյլի-Նիւսին» հաղորդում են Իմբրոսից. «Մի տեղում դաշնակից զօրքերը ափ իջան հետևեալ խարամանկութեամբ: Թնդանօթային կրակի պաշտպանութեամբ ափ իջեցրին 1000 էշ զինված փայտէ լեռնային թնդանօթներով: Թիւրքերն այնտեղ ուղարկեցին ուժեղ զօրաբաժին: Այդ ժամանակ իսկական զօրամասը ափ իջաւ մօտիկ տեղում: Թիւրքաց զօրաբաժինը, որ յարձակում էր գործել էշերի վրա, ոչնչացաւ դաշնակիցներից, որոնք գերի բռնեցին 1000 հոգի, որոնց թւում շատ գերմանական օֆիցերներ»:

«Կվին-Էլիզաբէթը» եռանդուն մասնակցութիւն ունեցաւ ռմբակոծութեանը, որ սկսվեց ապրիլի 14-ի առ. ժամը 10-ին և շարունակվեց մինչև կէս գիշեր: Թղթակցի ասելով, դաշնակիցները կէս ժամվայ ընթացքում արձակեցին 150 ռումբ: Ապրիլի 15-ի առ. ժ. 5½-ին ռմբակոծութիւնը վերսկսվեց:

«Դէյլի Էկսպրէսին» հեռագրում են Աթէնքից. «Երեք ռազմանաւ մտան Զմիւռնիայի ծոցը ապրիլի 14-ին և սկսեցին ռմբակոծութիւն: Ենոս ափ իջած դաշնակից զօրքերը անցան 20 մղոն՝ գրաւելով մի քանի գիւղ:

«Տրոյի գիւղի մօտ գերվեցին 8000 թիւրք»:

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Մոսկվայից Էջմիածին է մեկնել Մոսկվայի հայկական կոմիտէի բժշկա-սննդատական խումբը, որ կազմակերպեց Պիրագովեան ընկերութիւնը: Տեղում վճռվելու է այն հարցը, թէ որ շրջանում է գործելու խումբը փախստականներին օգնելու վերաբերութեամբ: Ձեռնարկված է երկրորդ խմբի կազմակերպութեան:

◆ «Р. В.»-ին հեռագրում են Աթէնքից. «Դաշնակիցները միանգամից չորս կէտում զօրք ափ իջեցրին Դարդանէլի մօտաքից ոչ հեռու»:

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են Աթէնքից. Դաշնակիցները ափ են իջեցրել երեք կամ չորս դիվիզիա ուժեղ թնդանօթաձիգ վաշտերով: Մնացած չորս դիվիզիան ափ հանելու գործողութիւնները շարունակվում են անարգել:

◆ Դաշնակիցների առաջին գլխաւոր նպատակն է վերցնել Կիլիդ-Բահրը եւրոպական ափում և Ջանաք-Կալէն՝ ասիական ափում:

◆ Թիւրքերի թիւը Գալլիպօլիում հաշւում են 50,000 մարդ. ասիական ափում ևս թիւրք զօրքերի թիւը խոշոր է:

◆ «Р. В.»-ին հեռագրում են Ժընէվից. «Սուլթանը մտադիր է հաշտութիւն խնդրել և դիմել է Նամակով երբեակ համաձայնութեան պետութիւններին»:

◆ «У. Р.»-ն հաղորդում է, որ Կ. Պոլսի յոյնաց դեսպանը յանձնեց մեծ վեզիրին Յունաստանի նոտան վարձահատուցման մասին՝ չէզոքութիւնը շարունակելու համար: Բ. Դուռը Յունաստանի պահանջները գտաւ չափազանցված և յայտնեց, որ յարաբերութիւնները խզելու դէպքում նա կը դիմէ երբեակ համաձայնութեանը, առաջարկելով անջատ հաշտութիւն:

◆ «У. Р.»-ն հաղորդում է, որ Թիւրքաց զօրքերի մէջ մտնում են աւազակախմբեր: Արդէն արձագանք է տուել յայտնի Հաջի-Մուստաֆան, որ 16 տարի շարունակ անհանգստել է ազգաբնակութիւնը:

ՊՐՕՖ. ՊԼԱՏՕՆՈՎԻ ԿԱՐԾԻՔԸ

Պետրոգրադում տեղի է ունեցել սլաւօնական հացկերոյթ, որ եղել է շատ հետաքրքրական՝ ներկայ եղող արևելագէտների տրամադրած ճառերի շնորհիւ:

Ներկայ են եղել պրօֆ. Պլատօնով, պրօֆ. Վասիլիէվ, Ա. Բաշմակով, սլաւօնական գործիչներ՝ Վերգուն, Նիկանօրով և ուրիշներ:

Նախագահել է գեներալ Սկուգարևսկին:

Պրօֆ. Պլատօնովը շեշտել է այն, թէ ինչ նշանակութիւն ունի Կ. Պոլիսը ռուսների համար: Այժմ ռուսները անկարող են ապրել առանց Սև ծովի և նեղուցների: Մենք միայն Բոսֆորով չենք կարող բաւականանալ: Խաղաղութիւնը միայն այն ժամանակ յարատև կը լինի, երբ մենք կանգնենք Փոքր-Ասիայում և հաստատ տէր կը լինենք ամբողջ Անատոլիայի և Հայաստանի վրայով կանգնենք Կապադովկիա. այն ժամանակ մեզ նեղուցներն էլ հարկաւոր չեն:

Վերգունն ու Նիկանօրովը արտայայտվեցին այն մտքով, թէ ամենից առաջ պէտք է վերականգնել խաչը ս. Սօֆիայի վրա:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
17 ապրիլի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ապրիլի 16-ին, Նէմանից արևմուտք գտնվող ամբողջ զօրաճակատում մենք աստիճանաբար ետ մղեցինք գերմանացիների առաջապահ զօրամասերը:

Երեկոյեան, Նախօրեակին, Օսովէցի մօտ թշնամին յարձակում գործեց Սօսնա գիւղի մօտի մեր դիրքի վրա, բայց վանվեց խոշոր կորուստներով:

Ապրիլի 15-ի ամբողջ օրը ապարդիւն յարձակումներ էին Վեախի հիւսիսային մասում և Օմուլևի աջ ափում: Ուժեղ թնդանօթային կրակի պաշտպանութեամբ թշնամին Պիսսայի և Շկվայի միջև ետ քաշվեց դէպի իր նախկին խրամատները: Եդնօրօժցա գիւղի մօտ գերմանացիք ապրիլի 15-ի երեկոյեան կրեցին շատ ծանր կորուստներ 4 ապարդիւն յարձակում գործելու ժամանակ: Վիսլայի ձախ ափում թշնամու փոքրաթիւ զօրամասերը փորձեցին առաջանալ, բայց ոչ մի աջողութիւն չունեցան:

Գալիցիայում, Գօրլիցէի շրջանում ապրիլի 16-ի գիշերը մենք վանեցինք թշնամու զօրամասի արշաւը:

Կարպատներում, Պոլէնի մօտ աւստրիացիք ապրիլի 15-ի երեկոյեան նորից անաջող յարձակում գործեցին մեր վրա: Ուժօկից դէպի հիւսիս, Կոպոլովէցի անտառում աւստրիացիք լոյս 16-ի գիշերը նոյնպէս արշաւանք ձեռնարկեցին. Թողնելով որ թշնամին մօտենայ մինչև մեր խութերը, մենք յանկարծ կրակ բացինք և ոչնչացրինք նրա մի մասը:

Ստրիյի ուղղութեամբ, Գոլովէցկօ շրջանում մենք յարձակման դիմեցինք և գերեցինք մօտ 400 հոգի 7 օֆիցերի հետ:

Արևելեան Գալիցիայում թշնամին փորձեց յարձակման դիմել ապրիլի 16-ին Նադվօրնիից դէպի հիւսիս գտնվող շրջանում, բայց ապարդիւն:

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Դօրօխոյից հաղորդում են, որ վերջին ժամանակ բազմաթիւ զօրքեր են փոխադրվել գերմանացիների ձեռքով դէպի Բուկովինա: Այդ շրջանի բոլոր աւստրո-գերմանական զօրքերի գլխաւոր հրամանատար կարգված է գերմանացի գեներալ ֆօն-Բիբերշտէյնը: Աւստրիացիների առաջխաղացումը Բուկովինայի հիւսիսում կանգնեցված է. աւստրիացիք ստիպված էին հեռանալ մի քանի գիւղերից, որոնք անցել են ռուսների ձեռքը:

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Կոպէնհագէնից հաղորդում են, թէ երբ գերմանական զօրքերը փետրուարին կորցրել են 31,336 մարդ. մեզ առայժ կիսով յայտնի է, որ միայն Գրոդնոյի մօտ գերմանացիների կորուստները այդ թւից անցնում է:

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
17 ապրիլի

ՊԱՐԻԶ.— Պաշտօնական ցերեկվայ հաղորդագրութիւն.

Բելգիայում մենք շարունակեցինք առաջանալ բելգիական զօրքերի հետ միասին հիւսիսային ուղղութեամբ և Իզերի ջրանցքի աջ ափում և ձեռք ձգեցինք 150 գերի ու 2 գնդացիր:

Մաասի աջ ափում և Վոգէզներում ոչինչ նոր բան չը կայ:

Թշնամու աէրօպլաններից ռմբակոծվեց անպաշտպան Էպերնէ քաղաքը, որի մէջ գտնվում են բացառապէս սանիտարական խմբեր:

Համաձայն ստոյգ տեղեկութիւնների գերմանական «ցէպպելինը», որ անցաւ շաբաթ ռումբեր նետեց Դիւնկիրխէնի վրա, լըրջօրէն վնասվեց մեր թնդանօթային կրակից, ընկաւ Բրիւգէի և Գէնտի միջև մի գիւղում և ոչնչացաւ:

ԼՕՆԴՕՆ.—Վաղ առաւօտեան «ցէպպէլինից» և աէրօպլանից ռումբեր նետվեցին Իպսվիչի և Ուեյտոնի վրա. քանդվեց 3 տուն. յայտնի չէ՝ եղե՞լ են արդեօք մարդկային զոհեր: Բէրի-Սէնտ-Էդմոնդում նոյնպէս քանդվել է 3 տուն:

ՊԱՐԻԶ — Երեկոյեան հաղորդագրութիւնը յայտնում է.

Օրը խաղաղ անցաւ: Լոյս ապրիլի 16-ի գիշերը գերմանացիք երկու յարձակում գործեցին. մէկը բելգիական զօրքերի դէմ, Իպրից դէպի հիւսիս, միւսը Էպարժի մօտ: Երկու յարձակումն էլ վանվեցին:

Հակառակ գերմանական պաշտօնական հաղորդագրութեան Լոթարինգիայում ունեցած աջողութիւնների մասին, զօրաճակատի գիծը այստեղ մարտի 2-ից փոխվել է ի նպաստ մեզ: Մենք անընդհատ առաջ ենք գնում: Այն աջողութիւնները, որ գերմանացիք վերագրում են իրանց, հանդիսանում են սուկ ապարդիւն փորձեր դիմադրելու մեր առաջխաղացմանը:

ԼՈՆԴՈՆ.— Կուտում սպանվել է անգլիական գեներալ Գեսլէրը:

ԾՈՎԻ ՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)

17 ապրիլի

ՊԱՐԻԶ.—Պաշտօնապէս ծովային շտաբը յայտարարում է:

«Լէօն Գամբէտտա» յածանաւից ազատուածներից 110 հոգուն տեղափոխել են Սիրակուզա, 26 հոգի գտնվում են Բրինդիզիում. ծովակալը և 52 նաւաստու մարմինները թաղված են Սանտա-Մարիա-Լէուկայում: Թէ ինչ հանգամանքներում խորտակվեց յածանաւը, պարզված չէ ներկայումս. չը պէտք է հաւատ ընծայել լրագիրներում տպվող մեկնութիւններին:

ՍՏՕԿՀՕԼՄ.—Վերջին երկու օրում, լրագիրների ասելով, շվէդական 4 շոգենաւ գերմանական ստորջրեայ նաւերից բռնվել և տարվել են Սվինեմիւնդէ. Շոգենաւերի վրա կային հացահատիկ, եգիպտացորեն և քարածուխ:

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

17 ապրիլի

ՊԱՐԻԶ.—Վերսկսվեցին պատգամաւորների պալատի նիստերը: Դեշանէլը ողջունեց ժողովված պատգամաւորներին և իր ճառի վերջում ասաց, որ Ֆրանսիան անյողդողդ կերպով վճռել է ձեռք բերել յաղթութիւն թշնամու վրա:

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ.—Ռիկստագն ընդունեց ընտրութիւններին վերաբերող նոր օրէնքը:

ՍՏՕԿՀՕԼՄ. — Բուդապեշտից հաղորդում են, որ պատգամաւորների պալատում լանդշտուրմի օրինագծի քննութեան ժամանակ ունգարական պրեմիէրը և զինուորական մինիստրը ճառեր արտասանեցին. վերջինս մատնանշեց, որ ներկայ պատերազմում կռւող կողմերը զէնքի են կանչել մօտ 26 միլիոն զինուոր, որոնցից կէսը մասնակցում է պատերազմին:

ԼՈՆԴՈՆ.—Համայնքների պալատ: Լլոյդ Ջօրջը հաղորդեց այն միջոցները, որ կառավարութիւնը մտադիր է ձեռք առնել առաջն առնելու համար ոգելից ըմպելիքների չափազանց գործածութեան դէմ, որ առանձնապէս սաստիկ է ռազմամթերքներ պատրաստող գործարաններում աշխատող բանւորների մէջ: Այդ նպատակով նախագծված է աւելացնել ոգելից ըմպելիքների ակցիզը և իրաւունք տալ իշխանութիւններին հսկողութիւն ունենալ խմիչքատների վրա որոշ շրջաններում: Խօսելով այն մասին, որ Ռուսաստանում արգելված է ոգելից ըմպելիքների վաճառումը, Լլոյդ Ջօրջը ասաց, որ Անգլիայում հիմք չը կայ դիմել այդօրինակ միջոցի:

Խօսելով ռազմամթերքների քանակութեան մասին, Լլոյդ Ջօրջը նկատեց. «Անգլիական ազգը պէտք է իր միակ նպատակը դնէ՝ աւելացնել ռազմամթերքների արտադրութիւնը»:

ՀՌՈՄ.—Սոննինօն ընդունվեց Թագաւորից: Ունկնդրութիւնը տևեց 1 ժամ:

ՄՕԳԻԼԵՎ.—Կենսական մթերքների գները արհեստականապէս բարձրացնելու դէմ մաքառելու նպատակով դուման յատկացրեց 50,000 ռ., որպէս զի քաղաքը կազմակերպէ այդ մթերքների վաճառումը:

ՕԴԵՍՍԱ.—Քաղաքապետը ստացաւ Կայսերական Պալատի մինիստրի հետևեալ հեռագիրը. «Թագաւոր Կայսրը հրամայել բարեհաճեց շնորհակալութիւն յայտնել Օդեսսայի հրէայ ազգաբնակութեանը աղօթքների ու զգացմունքների համար»:

ՄՕՍԿՎԱ.—Քաղաքային դուման պատգամաւորութիւն ընտրեց քաղաքագլուխ Չէլնօկովից, Գուչկովից և Պետական Դումայի անդամ Նովիկովից՝ այցելելու Գալիցիա ազգաբնակութեանը Ռուսաստանին միանալու առիթով ողջունելու և նրա կարիքները պարզելու համար, որպէս զի օգնութիւն ուղարկվի Մոսկվայի կողմից:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Հօլլանդական լրագիրները գերմանական կորուստները Իպրի մօտ տեղի ունեցած վերջին կռիւներում հաշւում են 30,000 մարդուց ոչ պակաս:

◆ Յունաստանը լուրջ առաջարկութիւններ արեց Աթէնքի անգլիական դեսպանին: Պարիզում Յունաստանի պատգամաւոր պրինց Գէօրգիին առաջարկել են, որպէսզի Յունաստանը հանդէս գայ Թիւրքիայի դէմ, որի համար նրան վարձահատուցումն կը տրվի Փոքր-Ասիայում: Բօլգարիան, երկիւղ կրելով Յունաստանի ակտիվ քայլերից, հօգ է պատրաստում բանակցելու նրա հետ: Բօլգարիայի ղեկավար շրջանները գտնում են, որ այն օրից, երբ դաշնակից զօրքերը ափ են իջնում Գալիպօլիի թերակղզում, Բօլգարիայի դիրքը դառնում է միանգամայն անհաստատ:

◆ Լօնդօնում, Ուէլսի պրինցի հիմնած ֆօնդի գումարը հասաւ 50 միլիօն րուբլու: Բայց աւելի զարմանալին «Times»-ի խմբագրատան ֆօնդն է, որ հասաւ 13 միլիօն րուբլու, այդպիսի գումար ոչ մի լրագիր մինչև օրս չէ հանգանակել:

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են Պարիզից, որ գերմանացիների յարձակումը Իպրի վրա վանվեց: Թշնամին վանվեց դէպի Իզէր խոշոր կորուստներով: Գերմանացիների յոյսը՝ հասնել մինչև Իպր՝ ի դերև ելաւ:

◆ Վաշինգտօնի կառավարութիւնը հաղորդեց Պէկին, որ նա մնալու է չէզոք չինաճապօնական ընդհարման դէպքում:

◆ Հռչակաւոր երաժշտագէտ Րիխարդ Շտրաուսը Ամստերդամում ղեկավարում էր երաժշտական լարանուագ խումբը: Ամստերդամից մեկնելիս Շտրաուսը իր հետ վերցրեց մի տոպրակ ալիւր. «Այս լինելու է իմ ընտանիքիս համար Գերմանիայում մի իշխանական պարգև»—պատասխանեց իրան հարցնողներին, թէ ինչու է հետը ալիւր վերցնում:

◆ Գերագոյն Զօրահրամանատարի բանակը մեկնեցին արտաքին գործերի և արդարադատութեան մինիստրները:

◆ Գերմանացի օդագնացները վեց ռումբ նետեցին Րադոմի վրա:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

17 ապրիլի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական: Կայսերական Պալատի մինիստրի հեռագիրը.

Ապրիլի 17-ին Թագաւոր Կայսրը Սեվաստոպօլում գտնված ժամանակ ժամը 10-ին առաւօտեան դիմեց Արքայական նաւահանգստից, ուղեկցութեամբ ծովային մինիստրի և գեներալ-ադիւտանտ Նիլօվի, ռազմանաւերից մէկը, ուր ընդունեց զեկուցագիր Սև-ծովի ուժերի հրամանատար ծովակալ Էբերգարդից նաւատորմի գործողութիւնների մասին:

Ժամը 2-ին ցերեկով Թագաւոր Կայսրը այցելեց հիւանդանոց-նաւը:

Ապա Թագաւոր Կայսրի ներկայութեամբ կայացաւ զօրահանդէս, որի ժամանակ Նորին Մեծութիւնը բաժանեց Գէօրգիևսկի խաչեր.

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

17 ապրիլի

ԹԷՀՐԱՆ. — Էյն-ուդ-Դօվլէի կաբինէտը սկսեց իր գործունէութիւնը խելացի միջոցով՝ համաձայնելով անգլիական և ռուսական միսսիաների առաջադրութեանը հետ կանչելու Սպահանից շվէդ-հրահանգիչներին, որոնք խախտել էին պարսկական չէզոքութիւնը:

Մամուլը ուրախութիւն է յայտնում, որ ճգնաժամը անցաւ, և երախտագիտութիւն է արտայայտում Ռուսաստանին և Անգլիային, որոնք հնարաւորութիւն տուին պաշտպանել պարսկական չէզոքութիւնը:

Ազգաբնակութիւնը հանգստութեամբ ընդունեց ստիպողական դրամափոխանակման օրէնքը. Թղթադրամների փոխանակութիւնը դադարեց:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

17 ապրիլի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Ապրիլի 16-ի երեկ. ժամը 8 ու 10 րոպէին «պայթուցիկ նիւթերի Օխտէնի գործարանում» պայթում առաջացաւ: Պայթումից փլվեցին մի քանի շէնքեր. քանդվեց երկրորդական նշանակութիւն ունեցող մի արուեստանոց. վերանորոգութիւնը կը կատարվի շատ կարճ ժամանակամիջոցում: Պայթուցիկ նիւթերի պահեստները ամբողջ են: Աշխատանքը գործարանում կընդհատվի ընդամենը մի քանի օր, մինչև որ շինութիւնները կը մաքրվեն ապակու կտորներից: Վնասվածների թիւը դեռ պարզված չէ: Շրջակայ բնակիչների թւում կան շատ թեթև վիրաւորվածներ ջարդված պատուհանների կտորներից:

ՌԻԲԻՆՍԿ.—Մօլոգի և Շէկսնի անսովոր վարարումից շատ գիւղեր մնացել են ջրի տակ: Ուղարկված է օգնութիւն:

ՄՕԳԻԼԵՎ. — Դուման միաձայն որոշեց միջնորդել արգելելու օղու, գինու և գարեջրի վաճառումը ընդմիշտ:

ԳԵՆՈՒԱ.—Ապրիլի 22-ին տեղի կունենայ Գարիբալդիի արձանի բացումը: Դէպքը կրելու է ազգային բնոյթ, գալու է Թագաւորը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՈՒՑԱԿ

Խարբերդի Նուիրատուների

(Յօգուտ հայ գաղթականների)

(Տես «Մշակ» № 25)

Ս. Գրճեան, տիկ. Զազունեան, Կ. Ասպետեան, Բ. Տէր-Առաքելեան, Ե. Գրճեան և բժշ. Մղիսեան 10-ական ռ., Զ. Աւետիքեան, եղբ. Սարգիսեանք, Ա. Աւետեան, եղբ. Թէյմուրազեանք և Մ. Պօղոսեան 5-ական ռ., Թ. Օհանեան, Մ. Կարախանեան, Վ. Նազարեան, Գ. Սհակեան, Գ. Շահնազարեան, Մ. Շահնազարեան, Լ. Յարութիւնեան, Ռ. Լևոնեան, Վ. Բուդուղեան, Ա. Մամինեան, Ս. Բուդուղեան և Թ. Պետրոսեան 3-ական ռ., Գ. Շահնազարեան, Գ. Օհանեան և Գ. Պետրոսեան 2-ական ռ., Գ. Տէր-Օհանեան և Խ. Տէր-Մարգարեան 1-ական ռ., Ա. Անիսոնեան և Սհակեան 50-ական կ.: Գումարը 130 ռուբլի:

ԿՈՎԿԱՍԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ

(Երկրորդ Լօձ հիմնելու հարցի շուրջը)

Այժմ նորից հրապարակ է նետվել Կովկասի արդիւնաբերական ճիւղերի—ասել է՝ նրա բովանդակ նիւթական կուլտուրայի գործօնների — զարգացման կարևորագոյն հարցը: Խնդիրը հոլովվում է այս անգամ ոչ միայն մամուլի էջերում, այլև կիսապաշտօնական և անմիջապէս շահագրգռված գրուպպաների շրջաններում: Երբեմնի ծաղկած Լօձի այժմեան կիսաւեր վիճակն է, ըստ երևոյթին, որ հերթական է դարձրել Կովկասի արդիւնաբերական զարգացման հարցը:

Փոխադրել Լօձի գործարանները կամ հիմնել Կովկասում երկրորդ գործարանական Լօձը:

Այսպէս է դրված հարցը:

Մենք չենք պատկանում այն դիւրահաւատների շարքին, որոնք կարծում են, որ ռէալ իրականութեան այս կամ այն էջի արմատական փոփոխութեան համար հարկաւոր է բարի կամք և անկեղծ ոգևորութիւն: Ոչ, դա քիչ է, եթէ ուզում էք՝ նոյնիսկ կարիք չը կայ դրան:

Ոչ թէ երկրորդ Լօձ, այլ այդ երկրորդ՝ ռուսական՝ Մանչեստրի զէթ սաղմը հիմնելու համար Կովկասում ամենից առաջ կարիք կայ արդիւնաբերական անհրաժեշտ ֆակտորների: Նոր, բարձրարժէք արժէքներ ստեղծելու համար՝ պէտք են նախ և առաջ ստեղծագործող արժէքներ և այն անմիջապէս շահագրգռված գրուպպան, որի օգտագործման համար ստեղծվում են այդ արժէքները:

Խնդիրը պարզ է: Բաւական չէ, որ մեր երկիրը բամբակով ու բրդով հարուստ է:

Տեղական արդիւնաբերական ուժերը, ամենից առաջ՝ Կովկասի կապիտալիստները, չնչին են՝ թւով, թոյլ են՝ որակով, ստորարժէք են՝ ձեռներէցութեան ոգու բացակայութեան պատճառով, որպէսզի կարելի լինի սպասել նրանցից ինդուստրիական նոր օազիսի կենտրոն ստեղծող նախակարապետներ: Կատարելագործված տեխնիկայի կիրառման և մեծագումար կապիտալների գործադրութեան համար՝ կովկասեան նահապետական, լայն հորիզոններից զուրկ կապիտալիստները անընդունակ են նորաբարգաւաճ արդիւնաբերութեան պիոներներ դառնալու: Նրանք դեռ աչք կը տնկեն՝ վախկոտ չարչու անդուկաերկրպագութեամբ, մինչև արտասահմանեան (և մասամբ ռուսական) կապիտալիստները կանեն «ռիսկի» առաջին քայլերը: Ասածներիս ամենալաւ ապացոյցն է Բագուի նաւթարդիւնաբերութեան զարգացման սկզբնական շրջանները:

Բայց արտասահմանեան և ռուսական (պետութեան կենտրոններից) կապիտալ առհասարակ քիչ է գալիս Կովկաս. իսկ պատերազմի ժամանակ համարեա դադար է առել նրա հոսանքը:

Որ Կովկասը արդիւնաբերական խոշոր ապագայ ունի, դրա մասին չենք վիճում: Բայց այդպիսի ապագայի հասնելու համար հարկաւոր է տասնամեակների տևողութիւն, յամառ էներգիայի իմաստալից գործադրութիւն, պահանջվում է հսկայական կապիտալ՝ հոսուն թէ կանգուն ձևերով: Ճիշդ այնպէս, ինչպէս այսօրվայ Լօձը, իբրև արդիւնաբերական քաղաք, միայն այդ բոլոր նախապայմանների անհրաժեշտ զուգորդութեամբ կարող էր առաջնակարգ տեղ գրաւել: Արդիւնաբերական կենտրոնը տուն կամ երկաթուղային գիծ չէ, որ հիմնելու, կառուցանելու ժամանակը մի քանի տարիների գործ համարվի և հնարաւոր լինի հիմնադրութեան անհրաժեշտ պայմանների նախահաշիւը կազմել: Արդիւնաբերական ճիւղերի կենտրոնացումը և բարգաւաճումը արդիւնաբերական ուժերի յամառ էվօլիւցիայի արդիւնք է միայն:

Հէնց այդ տեսակէտից տարօրինակ է թւում, երբ հնչեցվում է հրապարակով Կովկասում երկրորդ Լօձ հիմնելու համարձակ լօզունգը: Նոյնքան տարօրինակ է միւս ենթադրութիւնը՝ փոխադրել Լօձի ֆաբրիկաները Կովկաս: Վերջին ենթադրութեան տակ պէտք է հասկանալ, անշուշտ, գործարանների մեքենաների փոխադրութիւնը՝ իրանց բոլոր պարագաներով:

Հարց է ծագում, ինչպէս կարելի է Լօձից որևէ ինվէնտար տեղափոխել, երբ այդ քաղաքը գտնվում է այժմ թշնամու ձեռքը: Թէ տեղափոխութեան տակ հասկացվում է այն, որ Լօձի գործարանատէրերը կը հիմնեն Կովկասում նոր ֆաբրիկաներ: Բայց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՅՇԷ ԽԱԹՈՒՆ*)

ՎԷՊԻԿ

(Քիւրդական իրականութիւնից)

VIII

1872 թ. նոյեմբ. 26-ի մռայլ ու մութ գիշերը մի ողբերգական առաւօտ ծնեց Մ. գիւղացիների համար... Դեռ գիւղական մուազինը չէր տուել իր մշտական արշալուսային ազանը, երբ ամբողջ գիւղը ցնցվեց հրացանների մի շարք համազարկի որոտից: Գիւղն ամբողջապէս ոտքի կանգնեց՝ կարծելով որ ինքը շրջապատվել է թշնամիներով. կիսաքուն, կիսահագնված շտապում էին ապահով վայրը: Կին, երեխայ բոլորը հաւաքվել էին փողոցները, տանիքները և այնտեղից աշխատում էին իմանալ անակնկալ պատահարի պատճառը. սակայն ոչ ոք դրական պատասխան չէր բերում, դեռ ոչինչ չէր պարզաբանվել... Դեռ տիրում էր ընդհանուր շփոթ ու իրարանցում:

Աղմուկը լսվում էր Հաջի Աբդուլլայի տան մօտերից. գիւղացիները հետզհետէ խմբվում էին այդ կողմը և գնացողները չէին վերադառնում. հրացանները քանի գնում՝ աւելի շուտ-շուտ էին որոտում. երևաց և առկայծող կրակ, որ քանի գնում՝ բոցավառվում էր և որի լոյսից տեղ-տեղ նկատվում էին իրարանցման մէջ ընկած ամբոխի վազ շարժումները. ընդհանուր աղաղակի մէջ որոշ ոչինչ չէր լսվում: Երբեմն հնչւում էր մի խռոխ և տհարկու ձայն, որը հաւանականաբար հրաման և խրախուսանք էր տալիս գործողներին: Հրացանների ձայնը հետզհետէ նուազեց և այլ և դադարեց. իսկ, ընդհակառակը, կրակը քանի գնում՝ բոցավառվում էր և լափում իր շուրջը գտնվող իրերը...

Ի՞նչ էր պատահել:

Ասլան բէկը պառաւ Մանիշէին Այշէ խաթունի մօտ ուղարկելով՝ սպասում էր նրա վերադարձին. և օրպէսզի երկար սպասելուց չը ձանձրանայ, իր դրսի սենեակում պատրաստել էր տուել մի խնջոյք. այդպիսի խնջոյքներ նա համարեա թէ միշտ ունենում էր ինչպէս մի սովորութիւն, որ ունենում են առհասարակ Քիւրդստանի ջահել աղաները. դա յետ-ընթրիքեան մի ժամանցի խնջոյք է, երբ աղաները իրանց շուրջն են հաւաքում գիւղի պատուաւոր համբաւներին և եղած նշանաւոր հիւրերին ու հիւրասիրում են չոր մրգեղէնով և լսում ժողովրդական շահիրների սիրահարական երգերն ու ռազմական պօէմները՝ սրնգի մեղմ նուագածութեան ներդաշնակութեամբ: Այդպիսի մի խնջոյք ունէր Ասլան բէկը և՛ այդ գիշեր, որը շատ երկար տևեց. բոլորի քունը տանում էր և արդէն շատերը սկսել էին անհանգիստ յօրանջումներով զգացնել տալ, որ արդէն կէս գիշերն անց է և «մուրախասի» ժամանակ է. սակայն այդ գիշեր սովորական «մուրախասա» (ազատ) խօսքը չէր լսվում Ասլան բէկի բերանից. իսկ թէ հիւրերը և թէ շահիրները իրաւունք չունէին առանց «մուրախասի» վեր կենալ և գնալ: Կէս գիշերից շատ էր անցել, մօտ էր ազանի ժամանակը, երբ յանկարծ պառաւ Մանիշէն գլխաբաց, ծամերը կտրած և արիւնի ցեխ քսած, անէծքի տարափը բերնից հեղեղելով մտաւ խնջոյքի սրահը... Վայրկենապէս ամեն ձայն դադարեց և տիրեց կատարեալ ապշութիւն. Ասլան բէկը, որ թիկն տուած ղալյան էր ծխում, ոտքի կանգնելով վայրագած հարցրեց պառաւին, թէ ինչ է պատահել և ինչ է այդ դրութիւնը...

— Այն է պատահել, որ,—պատասխանեց շնչասպառ լացով,—40 տարվայ ծառայութեանս վարձն ստացայ, այն ծառայութեան վարձը, որ մատուցել եմ հօրդ և քեզ, ահա: Եւ նա ցոյց տուեց իր կտրված ծամերը.

— Այնքան ստորացայ աչքումդ, որ տանս քնած ժամանակ Հաջի Աբդուլլայի լակոտը մտել է ներս և այս մահացու արատը կպցրել ճակատիս. սակայն ինձ չէ արատաւորել, այլ քեզ...

Ստորադաս և ստրուկ րայայի ըմբոստ զաւակի այդ եզակի, չը տեսնված յանդգնութիւնը վայրկենապէս ամենաուժեղ թափով զարթեցրեց բնական կրքի տակ թագաւորող անզուսպ գազանը և՝ առանց խղճի ու մարդկային զգացումի՝ տուեց չարագուշակ մահհրաւէրը՝ «սպանել Հաջու երեք որդիներին, ամբողջ կայքը թալանել եւ տունը կրակել...»:

Եւ եղաւ: Տասն րոպէի ընթացքում մի քանի տասնեակից ոչ-պակաս գազան ծառաներ շրջապատեցին դժբաղդ Հաջու դժբաղդագոյն որդիների բնակարանները և ափսոսանքով նկատեցին մեծ եղբայրների փախուստը... Րաշիդին գտան նրանք այն րոպէին, երբ պատրաստվում էր ձի նստելու. առաջին համազարկից ընկաւ Րաշիդի ձին. Խազալը և Այշէ խաթունը, տեսնելով Րաշիդի ձիու անկումը, իրանց ձիերը բաց թողնելով շտապեցին Րաշիդի մօտ, որը ուզում էր իրան պատսպարել պատի տակ և կռւի մտնել, բայց, աւա՜ղ, նախ քան դիրք մտնելը գնդակահար եղաւ երկրորդ ուժեղ համազարկից...

Հրէշի հրամանը մասամբ կատարված էր. Րաշիդը սպանվեց. միւս եղբայրները արդէն ազատվել էին: Տան կայքը ամբողջապէս աւարի գնաց և բնակարանը մոխրակոյտի վերածվեց: Սպանման գործողութիւնը այնպէս արագ էր կատարվել, որ գիւղացիներից դեռ ոչ ոք տեղեկութիւն չունէր. նրանք կարծում էին, որ փախչել ազատվել են, բայց երբ ընդհանուր շփոթը քիչ դադարեց, այն ժամանակ միայն գիւղը վերահասու եղաւ կատարված դառն և սրտամորմոք իրողութեան: Հետզհետէ խմբվելով անբաղդների շուրջը՝ տեսան Այշէ խաթունին ընկած ուշաթափ, իսկ խաթուն Խազալին լուռ ողբալիս Րաշիդի դիակի վրա...

—

Այդ դժբաղդ դէպքից անցել էր երեք օր. գազանը իր ճիրանները թաթախելով արեան մէջ և թալանելով այդ երբեմնի վիթխարի տան ամբողջ կայքը և բնակարանը կրակի մատնելով՝ զսպվել էր և մենակ նստած դրսի առանձնասենեակում լուռ՝ ղալյան էր ծխում, երբ ներս մտաւ պառաւ վհուկը:

— Աւետչէք եմ ուզում... տեսնեմ ի՞նչ ես տալիս պառաւիդ, որ սրա փոխարէնը դուրս գայ,—ասաց նա ցոյց տալով կտրըտված ծամերը:

— Ի՞նչ աւետչէք,—հարցրեց Ասլան բէկը հազիւ սթափվելով իր խոր մտածմունքներից:

— Սոխակը իր ոտով վանդակ է մտել...

— Ե՞ր է, ինչպէս, որտեղ է:

— Տանս. եկել է և ուզում է քեզ տեսնել. միայն թէ բոլորովին առանձին պիտի լինես. մի քանի ինչ-որ պայմաններ ունի առաջարկելու, որ ընդ միշտ քոնը լինի... Շատ է փոշմանել, որ հէնց սկզբից ինձ չի լսել և քեզ զայրացրել է...

— Շատ լաւ. այդ ես սպասում էի. գնա և բեր այստեղ. ես բոլորովին առանձին սպասում եմ...

Պառաւը դուրս գնաց:

Սկզբում այդ լուրը Ասլան բէկի վրա րոպէական ուրախ տրամադրութիւն առաջ բերեց, սակայն մի քանի րոպէից յետոյ այդ ուրախ տրամադրութիւնը հետզհետէ փոխվեց տրամութեան: Նա զգաց մի անորոշ, անսովոր ճնշում և ընկաւ դառն խորհրդածութիւնների մէջ... Ասլան բէկը իր կեանքի ընթացքում չէր հանդիպել դժուարութիւնների և յամառ դիմադրութեան, մանաւանդ սիրոյ ասպարէզում. նրա առաջին խօսքն ու կամքը միշտ յարգված էր ու կատարված. այդ պատճառով էլ այդպիսի դէպքերում երբէք բարդութիւններ չէին առաջ եկել, որ առիթ ներկայանար արիւնհեղութեան և կամ նոյն իսկ թալանի ու կրակի: Խազալի հանգամանքը նրա բնական ուղեղը յուզելով առաջ բերեց խորհրդածութեան կնճռոտ նիւթեր, որոնք ահա երեք օր էր, ինչ հակառակ նրա կամքի, յուզում էին նրան:

Այդ օրն էլ, նախ քան պառաւի ներս մտնելը հէնց այդ անծանօթ խոհերով էր տարվել, այնպէս որ, պառաւի այցելութիւնը և մինչև անգամ նրա աւետիք տալը այնքան էլ հաճոյք չը պատճառեցին Ասլան բէկին. բայց որպէսզի իրան ընկճված և մտախոհ ցոյց չը տայ՝ համաձայնվեց տեսակցել Խազալի հետ: Այժմ երբ մօտ էր այն ժամը, որ պիտի տեսնէր և շօշափէր այն կնոջը, որ մօտ մի տարի էր իրան չէր հպատակվում և որը պատճառ հանդիսացաւ մի հինաւուրց տան կործանման ու մի ջահել-ջիւանի անմեղ արեան, առաջին անգամ իր ապառաժ սրտի մէջ զգաց խղճի մի զօրաւոր խայթոց, որ ուղղակի ցնցեց նրան: Նա վերյիշեց իր բոլոր բռնակալութիւնները և այն բազմաթիւ լրբենի յարաբերութիւնները, որ ունեցել էր խեղճ ու անմեղ ռայայի կանանց հետ. նա կանգ առաւ իր վերջին, դեռ ևս թարմ սխրագործութեան պատկերի դիմաց, և նրա երևակայութեան մէջ պատկերացաւ Հաջին՝ իր վիթխարի հասակով, պատկառելի դէմքով, քօխվայութեան վերարկուն ուսերին և 50-ամեայ ծառայութեան ցուցակը շալակին... Եւ, ցուցամատը երկարացրած դէպի հարաւային անկիւնը, Ասլան բէկը հիպնոսացածի նման նայեց ցուցամատի ուղղութեամբ և տեսաւ Այշէ խաթունին՝ կմախքացած, ցնցոտիապատ և գլխին մի սև լաթ քցած ու չոքած մի հսկայատիպ դիակի առաջ ու ձեռքերը վեր բարձրացրած աղօթքի թէ անէծքի մրմնջոց վեր առաքելիս դէպի երկինք... Ասլան բէկը մի աւելի զօրեղ ցնցում զգալով այդ արթուն-տեսիլքից՝ որպէս խելագար ոտքի ցատկեց և դէմքը շփելով սկսեց արագ-արագ ետ ու առաջ գնալ: Խիղճը իր գործը տեսել էր արդէն. Ասլան բէկը թէև սարսափում էր այդ երևոյթից, բայց և այնպէս, մի անհասկանալի ցանկութեամբ հաճելի էր թւում իրան այդ երևոյթի տեսողութիւնը: Հէնց այդ վայրկեանին ներս մտաւ պառաւ Մանիշէն...

Ասլան բէկի երրորդ ցնցումը աւելի զօրեղ եղաւ և մազերը փշաքաղվեցին:

— Պատրաստ է խաթուն Խազալը ձեր հրամանին,—ասաց պառաւը լկտի ժպիտով:

— Դուրսը սպասիր նրա հետ, և երբ կանչեմ, թող նա ներս գայ. իսկ դու սպասիր, ներս մի գայ, այլ սպասիր դարպասի դռան, որ ոչ ոք ներս չը գայ:

Պառաւը հնազանդվեց և դուրս եկաւ միևնոյն ժամանակ շուարած մնալով նրա տեղից գտնել նոր մեքենաներ պատերազմի օրերին, երբ մեքենագործական ձեռնարկութիւնների նորագոյն կլասիք կայքերը՝ Գերմանիան փակ է այժմ մեր առաջ։ Միւս կողմից, ինչպէս կարելի է հարիւրաւոր միլիոնների կորուստներ ունեցած կապիտալիստներից (Լօձի գործարանատէրերից) սպասել, որ նրանք հէնց ներկայ կռիւների ժամին ձեռք զարկեն նոր ռիսկի։ Վերջապէս մի թէ նա տարիներով պիտի գրաւուած մնայ թշնամու զօրքից։ Պատերազմից յետոյ կրկին կը վերականգնուայ Լօձը և կը գրաւէ իր նախկին համարեա ամբողջակից դիրքը։

---

*) Տես «Մշակ» №№ 79 և 80.

Թող Կովկասը զարգացնէ արդիւնաբերական այս կամ այն ճիւղը, հէնց օրինակ բամբակագործութիւնն ու բրդագործութիւնը, որոնց համար ունի նա հում նիւթերի առատ բերքեր։ Եթէ մեր ծայրերկրի այս կամ այն քաղաքում դանդաղօրէն ծնունդ առնեն մի քանի գործարաններ, այդ չի նշանակի, որ այդ քաղաքը յաւակնութիւն ունի երկրորդ արդիւնաբերական Լօձը դառնալու։ Կովկասը դեռ շատ հեռու է, տարաբաղդաբար, եւրոպական տիպի խոշոր արդիւնաբերական կենտրոններ զարգացնելու կարելիութիւնից, եթէ չը հաշւենք ի հարկէ Բագուն, որի բացառիկ աճողութիւնը կախուած է հողի գէօլօգիական առանձնայատկութիւններից։

Ինչպէս Ռուսաստանի բոլոր յայտնի արդիւնաբերական բայօնները ծաղկել, զարգացել են միայն արտասահմանեան (եւրոպական) էլեմենտների (անձնական և առարկայական իմաստով) անմիջական մասնակցութեամբ և աջակցութեամբ, այնպէս էլ բնական հարստութիւնների շտեմարան Կովկասը պէտք է անխուսափելիօրէն վայր դառնայ նոյն արտասահմանցիների յեղաշրջող գործունէութեան, եթէ ցանկալի է, որ նրա տնտեսա-կուլտուրական ազատագրութիւնը [illegible] լինի արագ և հիմնական։

B. Lucifer

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Ապրիլ 16-ին քաղաքագլխի նախագահութեամբ կայացաւ քաղաքների ներկայացուցչական 3-դ համագումար կազմակերպող բիւրոյի նիստը։ Համագումարի կարգադրիչ մասը յանձնուած է քաղ. վարչութեան անդամ Մ. Աթաբէկեանին, քարտուղար է նշանակուած Ա. Ի. Ստաւրովսկի։ Համագումարը բացուելու է մայիսի 9-ին, և նրա զբաղմունքները տևելու են երեք օր։ Որոշուել է Կովկասի քաղաքներին խնդրել, որ իրանց ներկայացուցիչները ուղարկեն, այնպէս որ նրանք մայիսի 8-ին Թիֆլիսում լինեն։ Համագումարի համար պատրաստւում են զեկուցումներ։ Քաղաքագլուխը զեկուցում է պատրաստում Կովկասի բուժիչ վայրերի մասին, քաղ. վարչութեան անդամ Իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկ՝ վիրաւորներին խնամելու և տեղափոխելու մասին, Մ. Զաքար՝ թանգութեան դէմ կռուելու մասին, Գ. Ժուրուլի՝ քաղաքների ֆինանսական դրութեան մասին, Մ. Աթաբէկեան՝ պահեստի զինւորների ընտանիքների իրաւաբանական օգնութեան մասին։ Վիրաւորների կարգադրիչ յանձնաժողովի նախագահ Իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկին յանձնարարուած է համագումարի ժամանակ հիւանդանոցային գործերի ցուցահանդէս կազմակերպել։

◆ Թօքախտի դէմ կռւող կովկասեան ընկ. ամսիս 20-ին կազմակերպում է «Սպիտակ ծաղկի» օր։ Այդ օրը հաւաքուած նուիրատուութիւններով այս տարի ամառային գաղութ է բացուելու դպրոցական երեխաների համար։ Գաղութը կառուցվելու է Աբասթումանում, Արօզինա վայրում։

◆ Գեղարուեստը խրախուսող ընկ. Փառաց տաճարում կազմած գեղարուեստական ցուցահանդէսը այցելել են մինչև ապրիլի 17-ը 5,500 հոգի. այդ ժամանակ նկարներ ծախվել են 3,200 րուբլու։

◆ Նախաձեռնութեամբ պրոֆ. Կ. Աղաջանեանի և բժիշկներ Բ. Աղասարեանի, Վ. Արծրունու, Պ. Զալբեանի, Գ. Մելքոնեանցի և Ա. Քաթմանեանի կատարվելու է սգահանդէս նորոգ հանգուցեալ բժշկ. Արտաշէս Բուդուղեանի յիշատակին։ Սգահանդէսը լինելու է այսօր՝ Տ. Նազարեանի Գրական-Գեղագիտական Սալօնում (Головин. пр. 41)։

◆ Այսօր, կիրակի, Քամօյեան եկեղեցում (Դվօրցովայա փող.) Պետրօգրադում վախճանուած բժշկ. Արտաշէս Բուդուղեանի յիշատակին կատարուելու է հոգեհանգիստ։

◆ Երէկ Աստրախանից Թիֆլիս եկաւ համառուսական քաղաքների դաշնակցութեան լիազօր Գ. Ք. Մկրտումեան։ Ճանապարհին նա եղել է Բագւում։ Այս օրերս նա կը մեկնի Կարս՝ փախստականներին, առանց ազգի խտրութեան, [illegible] բաժանելու։

◆ Նահանգապետը առաջարկել է քաղ. վարչութեանը շտապ միջոցներ ձեռք առնել վերացնելու այն հակասանիտարական դրութիւնը, որ նկատւում է Բաբա-Այվազեանի տանը բնակուող ասորի փախստականների շրջանում, ուր բուն է դրել բծաւոր տիֆը։

◆ Զինւորակոչական վարչութեան գործունէութիւնը նորակոչներին բժշկական քննութեան ենթարկելու մասին յետաձգուած է մինչև մայիսի 15-ը։

◆ Այսօր, Ալեքսանդրեան այգում, յօգուտ պատերազմից վնասուածների լինելու է մեծ զբօսանք, որը կազմում է «Կարմիր ձուի» յանձնաժողովը։

◆ Լոյս տեսաւ «Տարազի» ապրիլի №-ը շքեղ նկարներով և բովանդակալից։ Տպագրուած են բժշ. Բուդաղեանի շատ աջող պատկերները պրոֆեսոր Աղաջանեանցի յօդուածով, Ս. Մանդինեանի ուշագրաւ յօդուածը։ Շատ շքեղ է գարնանաբոյր Թեդաւօթ նկարը, կան օրուան պատշաճ յօդուածներ՝ Անդրանիկի, կամաւորների խմբերի, Նժմալեանի, Պարոն-Սարգսեանի, դաշնակահարուհի օր. Մ. Միրիմանեանի և այլն։

◆ Ստացանք Եղիշէ քահ. Գեղամեանի «Հայերի ազատագրութեան շարժումները ԺԹ. դարում» գրքոյկը։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Ալեքսանդրապոլում հրատարակւող «Գաւառի Ձայն» թերթի խմբագրութիւնը խնդրում է մեզ տպել հետևեալը. «Գաւառի Ձայն» թերթը ժամանակաւորապէս դադարել է՝ խմբագրի հիւանդութեան և բացակայութեան պատճառով։ Միջոցներ են ձեռք առնւած թերթի հրատարակութիւնը վերականգնելու ամենամօտ ապագայում»։

գունատ դէմքից։ Ասլան բէկը նստեց օթոցի վրա և մի քանի ուժգին ներշնչումով կլանեց ղալյանի ծուխից որոշ քանակութիւն, աշխատեց մտքերն ամփոփել և անդորրութիւն տալ դէմքին ու համարեա դողացող ձայնով կանչեց.

— Թող ներս գայ Խազալը...

Եւ նրա սիրտը սկսեց արագ կերպով խփել։

Շատ չը տևեց, վարագոյրը դանդաղ կերպով բարձրացաւ և մեղմ քայլերով ներս մտաւ մի բարձրահասակ, բարեկազմ, միջակ գիրութեամբ, աւելի սպիտակ՝ քան ցորենագոյն դէմքով, խաժ ու խոշոր աչքերով մի կին. Դա Խազալն էր... այն կինը, որին վիճակուած էր բայա դասակարգի լուռ բողոքների թարգմանը հանդիսանալու իր հերոսական զոհաբերութեամբ... գունատ՝ որպէս մահուան հրեշտակը և օժտ. կատարեալ խաղաղութեամբ ձեռքերը «քօլունի» տակ խաչած կրծքին՝ ներկայացաւ և կանգնեց պատի տակ, հեռու՝ Ասլան բէկից, գլխիկոր, սակայն վճռականութեամբ երդուեալ...

Ասլան բէկը հազիւ կարողացաւ գլուխը բարձրացնել և նայել նրա երեսին, որի համար քիչ էր մնացել խելագարուի և որի պատճառով քանդեց մի շէն օջախ ու ձեռքերը թաթախեց անմեղ արեան մէջ։ Այդ մարդը, որ երբէք ընկճուել չէր գիտէր, որ երբէք նրա լեզուին ամենայանդուգն աւազակն անգամ փականք չէր կարողացել դնել, պապանձուած մնաց այդ «Թոյլ, բայա» կնոջ հանդէպ. Նա գլուխը կախեց և դիմեց ղալյանի օգնութեան, բայց այդ րոպէին կարծես ղալյանն էլ էր ըմբոստացել և ծուխ չէր արձակում, նա հանգել էր...

Երկար լռութիւն պահելը նա անպատշաճ համարեց և իր անհամբերութեան համար վիրաւորական. բանի ճիգ գործելով միայն այսքանը ասաց.

— Խազալ, այդ դու ես. ինչու այսքան չարիքների պատճառ դարձար և շատ անձնատուր չեղար ինձ։

Խազալը մնաց անպատասխան. չէշտակի նայեց նրա երեսին լուռ և խորհրդաւոր...

— Եկ մօտս, եկ, գիտեմ վշտացած ես. Կը փոխարինեմ քո կորուստը, և դու գոհ կը լինես ինձանից և քո վիճակից, եկ...

Բայց Խազալը լուռ էր։

Ասլան բէկը, տեսնելով որ տեղից չէ շարժւում, այդ հանգամանքը ամօթխածութեան վերագրելով, ինքը վեր կացաւ տեղից և առաջ գալով ձախ թեւը ձգեց նրա վզով և ուզում էր համբուրել, բայց յանկարծ Խազալը վագրի մի թեթև շարժումով աջ ձեռքը հանեց «քօլունի» տակից ու փոքրիկ դաշոյնը վայրկենապէս մխեց նրա ձախ կողը... Եւ մինչ Ասլան բէկը յանկարծակիի եկած՝ ձեռքը տարաւ դէպի իր դաշոյնը, Խազալը իր դաշոյնը նրա կողքից դուրս քաշելով ամբողջ թափով խրեց իր կուրծքը՝ աղաղակելով.

— Գալիս եմ քեզ մօտ, Բաշիդ, գալիս եմ երեսս պարզ ու արեանդ վրէժն առած...

Եւ մինչ Ասլան բէկը աշխատում էր դաշոյնը մերկացնել, Խազալի անշունչ դիակը փռուեց նրա ոտքերի տակ։

—

Խազալի Թօյլ հարուածը չը սպանեց Ասլան բէկին. Նա առողջացաւ. բայց այդ փոքրիկ վէրքից գոյացաւ մի սպի, որը որպէս յիշողութեան և նշանակի խարան՝ Ասլան բէկի համար ներկայացաւ կեանքի ուղեցոյց, որով նա դարձաւ մի բարեփոխուած ու խղճահարուած աղա իր բայա դասակարգի վերաբերեալ. սակայն խղճի խայթը նրան շատ երկար չը տանջեց. կիսախելագար դրութեան մէջ՝ դեռ տարին չը լրացած՝ նա խեղդուեց գետում լողանալիս...

Իսկ Մ. գիւղի հասարակութիւնը Այշէ խաթունի խնդրանօք և ցանկութեամբ թաղեց Խազալին Բաշիդի մօտ, Մ. գիւղի այգու մօտի փոքրիկ թումբի վրա, որտեղ մենք պատահեցինք Այշէ խաթունին պատմութեան առաջին գլխում իր սիրելիների զոյգ գերեզմանը պահպանելիս...

Խուրշիդ

(Վերջ)

◆ Երևանում հրատարակուող «Эриванск. Объявл.»-ի յայտարարութիւնից երևում է, որ 1907 թ. Յարութիւն Շամիրեանի նուիրած 14,000 րուբլին՝ հայ ազգաբնակութեան փոքրահասակ որբերի համար ապաստարան կառուցանելու, առ 1 յունվարի 1915 թ. աճելով դարձել է 23,449 ր. 50 կ., որից 23,400 ր. 4%-ային պետական ռէնտա է, իսկ 49 ր. 50 կ. կանխիկ դրամ։ Այդ դրամագլուխը պահւում է պետական բանկի Երևանի բաժանմունքում։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Հարց է բարձրացուած վերահսկողութիւն նշանակելու քաղաքային և զեմստվային միութեան գործունէութեան վրա։ Պատճառներից մէկը այն է, թէ միութիւնները զբաղւում են բժշկա-սանիտարական գործով, որը Կարմիր Խաչի ֆունկցիան է կազմում ամբողջովին։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍՆԵՐ

—

Փառաց տաճարում

Դ.

Գեղեցիկ արուեստների այս ճիւղը՝ քանդակագործութիւնը, որ աւելի դժուար ըմբռնելի է մեզին հասարակութեան համար, քան նկարչութիւնն ու ճարտարապետութիւնը, կովկասցիներիս համար մնացել է խորթ զաւակ։ Մեր լօթօ սիրող և տաւղ քաղաքացիք, որ երբեմն տասնեակ հազարներ են ծախսում Խօջիվանքում իրանց սիրելիների հողաթմբերի վրա՝ ոսկեղ, այլանդակ շէնքեր կամ դամբաններ կանգնեցնելու, չեն սիրում կամ ցանկանում գեղարուեստական կոթողներ կանգնեցնել, արձաններ պատուիրել մեր կովկասեան մի քանի արձանագործներին։ Հայերս մանաւանդ ամեն բան սիրում ենք՝ բացի գեղարուեստը և գրականութիւնը. մի հատիկ արձան պիտի կանգնեցնէինք մեր մեծ գրողներից մէկի վրա, այն էլ մինչև օրս գլուխ չեկաւ։ Հասարակութեան այս անտարբեր և սառը վերաբերմունքից չէ արդեօք, որ կովկասեան սակաւաթիւ քանդակագործները էլ փախել են Կովկասից ու գացել այն տեղերը, ուր իրանց հասկանում են և գնահատում։ Օրինակ Տէր-Մարուքեան, Գիւրջեան, Նիկոլաձէ, Մերկուրով ինչու պէտք է Թիֆլիսում չը լինէին ու մասնակցէին մեր ցուցահանդէսներին։ Թիֆլիսում կան չը կան միայն երկու գեղարուեստագէտ արձանագործներ կան մնացած՝ Շերուեվ և Միքայէլեան, որոնք, հակառակ մեր հասարակութեան անտարբերութեան, յամառում են մնալ մեր մայրաքաղաքում, առաջինը ուսուցչութիւն անելով, երկրորդը կատարեալ ասկետական կեանք անցնելով։ Ահա այս երկու պարոնները բերել են իրանց նոր գործերը հրապարակել Փառաց տաճարի ցուցահանդէսում, մի այլ ժանր մտցնելով սրահի միապաղաղութեան մէջ և ցոյց տալով նաև Թիֆլիսին, որ իրանք դեռ կենդանի են։ Բայց Թիֆլիսից քանի մարդ գնաց ցուցահանդէսը տեսնելու։

Քանդակագործ Շերուեվ դրել է հինգ գործ. բոլորն էլ կիսանդրիներ (բիւստ), մէկը Մոսկվայի կանանց բարձր կուրսերի վերատեսուչ Զալեզկինի դիմանկարը, միւսները՝ կովկասեան տիպեր։

Միքայէլեանը ցուցադրել է ութ աշխատութիւն, պորտրէտային գործերից բացի և այլ սիւժէներ, ինչպէս «Փորձանք», «Արժանի է քեզ» և այլն։

Այս արուեստագէտները, թէ մէկը և թէ միւսը, նատուրալիստներ են, տեխնիկայով նման միմեանց. գաղափարի խորութեամբ Միքայէլեանն աւելի բարձր է՝ ընտրած սիւժէներին համապատասխան։

Որքան լաւ է վերջինիս «Փորձանքը» և կատարելապէս արժանի գովասանքի, այնքան թոյլ է նրա «Ըմբիշը»։ Աջող է նաև «Նկարիչ Բօտարեվը» և շատ աջող մանաւանդ «Մանկան գլուխը»։ Վաղուց չէ որ քանդակագործ Միքայէլեանի գործերը շատ էին թոյլ, շատ էին միամիտ ու սկսնակ, բայց ներկայ ցուցահանդէսում իր դրած մի քանի սիրուն գործերով յարգելի արուեստագէտը ցոյց է տալիս, որ նա վերջին տարիներս յամառ և յօգնաջան աշխատանք է գործ դրել։

Թիֆլիսի ինտելիգէնցիան, որ գիտէ պարծենալ Կովկասի առաջդիմութեամբ և կուլտուրականութեամբ, պարտաւոր է այցելել գեղարուեստական ցուցահանդէսները։ Թող դրանք համեստ լինեն, աղքատ այդ սրահները, բայց մերն են, չէ՞. ինչպէս պէտք է խրախուսուի մեր մէջ արուեստագէտը, երաժիշտը, գրողը, դերասանը, եթէ մենք մեր անտարբերութեամբ կամ ժխտամտութեամբ ոչ գեղարուեստական ցուցահանդէսներ այցելենք, ոչ գրքեր գնենք և ոչ թատրոն գնանք։

Գ. Լևոնեան

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Сборникъ Дипломатическихъ Документовъ. Реформы въ Арменіи. 26 ноября 1912 г.—10 мая 1914 года. Изд. Министерства Иностр. Дѣлъ. Петроградъ, 1915 г.

(Ժողովածու Դիպլոմատիական Դոկումենտների։ Ռէֆորմները Հայաստանում։ 26 նոյեմբեր 1912 թ. սկսեալ ց10 մայիս 1914 թ.։ Հրատար. արտաքին գործերի մինիստրութեան)։

XXXIII

Նարնջագոյն գրքի 149-դ դոկումենտը Սազօնովի հեռագիրն է Գուլկևիչին, յունվարի 28-ից, որով իր գոհունակութիւնն է յայտնում կայացած համաձայնութեան համար և դրանում Թիւրքիայի հետ բարեկամութիւն ընդարձակելու գրաւականն է տեսնում։

150-դ դոկումենտն է Գուլկևիչի հեռագիրը Սազօնովին, յունվարի 28-ից, թէ աւստրիական և իտալական դեսպանները յայտնել են իրան, որ իրանք իրանց կառավարութիւններին յայտնել են մեծ վէզիրի խնդիրքը՝ սեկտորների համար վերատեսուչներ առաջարկելու մասին։ Դրա հետ միաժամանակ նրանք աւելացրել են, որ խորհուրդ են տալիս իւրաքանչիւր տեղի համար առաջարկելու երկուական թեկնածու, որպէսզի առաջարկութիւնը Բ. Դրան վրա պարզ բռնութիւն գործ դնելու բնոյթ չը կրէ։ Եւ Գուլկևիչը նոյն այդ խնդիրը յայտնում է մինիստրին։

151-դը Գուլկևիչի հեռագիրն է Սազօնովին, յունվ. 29 ից, թէ ինքը լսել է, որ Սայիդ Հալիմ-փաշան խնդրել է ֆրանսիական գործերի հաւատարմատարին յայտնել իր կառավարութեան հետևեալ խնդիրքը, որ նա ընդ.-վերատեսուչների համար երկուական թեկնածու առաջարկի Բ. Դրան։

152-դը՝ Սազօնովի հեռագիրն է Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի, Աւստրօ-Ունգարիայի և Իտալիայի ռուսական դեսպաններին, որով ազդարարում է նրանց, որ յայտնեն կառավարութիւններին, որ Թիւրքիոյ հետ համաձայնութիւն է կայացել Հայաստանի բարենորոգումների մասին, յայտնեն նաև Բ. Դրան դիմումը, որ իւրաքանչիւր պետութիւն առանձին թեկնածուներ առաջարկի վերատեսուչների համար։ Մինիստրը կարծում է, որ բոլոր պետութիւնները պէտք է միասին հաստատեն թեկնածուների անունները Բ. Դրանը ներկայացնելու։

153-դը՝ Գուլկևիչի հեռագիրն է Սազօնովին, յունվարի 31-ից, թէ ինքը իմացել է, որ Սայիդ Հալիմը դիմել է անգլիական և գերմանական դեսպաններին խնդրելով թեկնածուներ առաջարկել։

154-դը՝ Անգլիայի ռուսական դեսպան Բենկենդորֆի հեռագիրն է Սազօնովին, փետր. 4-ից, թէ Գրէյը ասել է իրան, որ սկզբունքով ընդունում Սազօնովի տեսակէտը Հայաստանի վերատեսուչների թեկնածուների մասին։

155-դը՝ Գիրսի հեռագիրն է Սազօնովին, մարտի 10-ից, թէ իրան ներկայացուած ցուցակը՝ վերատեսուչների թեկնածուների ընդունուել է անգլիական և ֆրանսիական դեսպանների կողմից, իսկ Վիէննայի կաբինէտը հաղորդել է աւստրիական դեսպանին, որ ինքը հարցրել է Բեռլինի կարծիքը։ Իտալական դեսպանն էլ լիազօրուած է ընդունել «Si omnes» ցուցակը։

156 դը՝ Աւստրօ-Ունգարիայի ռուսական դեսպանի հեռագիրն է Սազօնովին, մարտի 24-ից, թէ Կ. Պօլսի աւստրօ-ունգարական դեսպանը լիազօրուած է իր կոլլեգաների հետ Բ. Դրան ներկայացնել հինգ թեկնածուների ցուցակ։

157-դը՝ Գիրսի հեռագիրն է Սազօնովին, ապրիլի 2-ից, որով յայտնում է, թէ Բ. Դուռը արևելեան վիլայէթների համար ընդ.-վերատեսուչներ ընտրեց հոլլանդացի Վեստենենկին և նորվեգիացի Հօֆֆին։

Ամենայն Հայոց Կաթողիկոսի գրութիւնը Սազօնովին

(Նարնջագոյն Գրքի 158-դ (վերջին) դոկումենտը)

Նորին Պայծառափայլութիւն՝ Նորին Կայսերական Մեծութեան Կովկասեան Փոխարքան, գեներալ-ադիւտանտ կոմս Իլլարիօն Իվանովիչ Վօրօնցով-Դաշկովը, տեղեկացրեց ինձ ռուսական գործերի հաւատարմատարի և մեծ վէզիրի միջև այս տարուայ յունվարի 26-ին կայացած համաձայնութեան մասին Թիւրքաց Հայաստանի ռեֆորմների վերաբերեալ, որ ձեռք բերուեցին Նորին Կայսերական Մեծութեան՝ իմ բազմաթանկ հօտի Թագաւոր Հովանաւորի կառավարութեան ջանքերով։ Նորին Պայծառափայլութիւն Փոխարքայի նամակին կցուած է յիշեալ համաձայնագրի թարգմանութիւնը ֆրանսերէն բնագրից, որով բարեհաճել է պատիւ անել Ձերդ Բարձր Գերազանցութիւնը։

Թիւրքահայերի կեանքի այս պատմական օրերին, երբ Ձերդ Բարձր Գերազանցութեան հաստատուն և բարձր մարդասիրական քաղաքականութեան շնորհիւ հիմք է դրվում իմ հօտի հոգեկան կեանքի խաղաղ և կուլտուրական զարգացմանն այնտեղ, ուր մինչև այժմ իշխում էր քրիստոնեայ ազգաբնակութիւնը հետևողական կերպով ոչնչացնելու սիստեմը, երբ Ազատարար Կայսրի մեծ գործն սկսում է կենդանի իրականութիւն դառնալ ի բարին և ի յառաջդիմութիւն մի ամբողջ ժողովրդի, որ դարերի ընթացքում անընդհատ հալածանքներ է կրել քրիստոնէական ամենահին կրօնին հաւատարիմ մնալու և դէպի Մեծ Ռուսաստանն ունեցած համակրութեան համար, երբ իմ սիրեցեալ Միապետի՝ Թագաւոր Կայսր Նիկոլայ II-ի իշխանութեան կամքով հայ ժողովուրդը կրկին պատմական ասպարէզ է կոչւում իբրև միակ տարրը, որ ընդունակ է Ասիական Թիւրքիայում իրականացնելու եւրոպական հոգևոր և նիւթական կուլտուրայի սկզբունքները, պատմական այս օրերին ես իմ սուրբ պարտականութիւնն եմ համարում իմ և ամբողջ հայ ժողովրդի անունից յայտնելու Ձերդ Բարձր Գերազանցութեանն անկեղծ շնորհակալութեան զգացումներ։

Հայկական հարցի պատմութիւնը Թիւրքիայում, ինչպէս յայտնի է Ձերդ Բարձր Գերազանցութեանը, հարիւր հազարաւոր թանգագին կեանքերի գնով սովորեցրել է հայ ժողովրդին ըստ արժանւոյն գնահատել օսմանեան կառավարութեան բազմաթիւ խոստումների գործնական նշանակութիւնը՝ մարդկային գոյութիւնը պահպանելու համար ստեղծելու տանելի պայմաններ այնպիսի ըէալ երաշխիքների միջոցով, որոնք պարտաւորեցնէին նրան՝ իսկապէս իրականացնելու մինչև այժմ խոստացուած ռէֆորմները։ Նոյն այդ պատմական ընթացքն է կանխորոշել այդ երաշխիքները հայ ժողովրդի համար, որ աղօթքներով դարձնում է իր հայեացքները դէպի ռուսական Մեծ Պետութիւնը, քրիստոնեաների վաղեմի Հովանաւորն Արևելքում։

Այժմ, երբ Ձերդ Բարձր Գերազանցութեան իմաստուն ղեկավարութեան տակ ռուս դիպլոմատիան յանձն առաւ ակտիվ նախաձեռնութիւն՝ մշակելու և իրականացնելու ռէֆորմները Թիւրքաց Հայաստանում, իմ հօտը, համոզված եմ ես, կարող է հանգիստ կերպով ձեռք առնել իր հոգեկան-կուլտուրական ոյժերը վերականգնելու գործը, որոնք քայքայվել են դարաւոր հալածանքների շնորհիւ, և նա վստահ կերպով կարող է նայել ապագային, առանց երկիւղ կրելու այն սովորական արգելքներից, որոնք կարող են առաջ բերվել օսմանեան կառավարութեան կողմից Ձերդ Բարձր Գերազանցութեան յետագայ անելիքների առաջ՝ մշակված ռէֆորմների սկզբունքներն ամրապնդելու և նրանց անսայթաք կերպով կեանքի մէջ մտցնելու համար Թիւրքաց Հայաստանում։

Նոյն այս խորին հաւատը Ձերդ Բարձր Գերազանցութեան բարեհաճակամութեան վերաբերեալ, Դուք, որ ցոյց էք տուել դէպի հայերը և նրանց օրինական ձգտումներն ունեցած բարեհաճ վերաբերմունքի այնչափ անգնահատելի ապացոյցներ, սոյն այդ հաւատն ինձ և իմ ժողովրդին յոյս է տալիս, որ Ձերդ Բարձր Գերազանցութիւնն ապագայում ևս նոյնպէս կարող պաշտպանութիւն ցոյց կը տայ, երբ կը մշակվի հրահանգ ընդհանուր տեսուչների համար, որոնք և պիտի կեանքի մէջ իրականացնեն ս. թ. յունվար 26-ի ռէֆորմները։ Վերառաքելով առ Բարձրեալն ջերմ աղօթքներ Ձերդ Բարձր Գերազանցութեան առողջութեան և երկար կեանքի համար ու օրհնելով Ձեր աշխատանքներն ի բարին Մեծին Ռուսաստանի, պատիւ ունիմ մնալու Ձերդ Բարձր Գերազանցութեան համար ջերմ աղօթարար։

(Ստոր.) Գէորգ Ե Ծայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց։

(Վերջ)

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Դրամա

Որքան որ յայտնի և բեմական աջող գրուածք է Գորդինի «За океаномъ» պիէսը, որի մասին արդէն մանրամասն գրած էր ժամանակին «Մշակում», սակայն նրա տպաւորութիւնը կրկնապատիկ ուժեղ է մանաւանդ այն անսամբլով, որով խաղում է Բարատովի խումբը Արտիստական թատրոնում։

Բաւական է ասել, որ օրինակ, ապրիլի 17-ին, յիշեալ պիէսի մէջ հանդէս եկան դերասանուհիներ Ժիխարեւան, Քալանթարը, Կօշևան և դերասաններ Բօրիսօվը, Բէլեաևը, Ուրենևը։

Թատրոնը ծայրէ ի ծայր լցրած հասարակութիւնը լարուած ուշադրութեամբ հետևեց Ժիխարեւայի (Լաֆիր) հոգեբանական դերի կատարեալ կատարմանը և Բօրիսօվի (Եանկել Մուշ) վերին աստիճանի տիպիկ ու կենսուրախ դերի տաղանդաւոր խաղին։

Իսկ ընդհանուր աջողութեանը պակաս չը նպաստեցին Ի. Քալանթար (Ցիլա), Բէլեաեւ (Իսահակ) և միւս դերակատարները, որոնք ամենքը դարձան ջերմ ծափահարութիւնների առարկայ։

Աւելորդ ենք գտնում յիշել նաև բեմադրութեան մասին, որ միշտ էլ աջող է շնորհալի ռեժիսոր Տուգանովի ջանքերով։

Րէցէնզէնտ

—

Այսօր ցերեկով խումբը կը ներկայացնէ Գօգօլի անմահ «Վերաքննիչը», որի ներկայացումը աւելի է հետաքրքրական ներկայանում, եթէ նկատի առնենք, որ մասնակցելու է տաղանդաւոր Բօրիսօվը։

Երեկոյեան վերջին անգամ կը տրվի «Барышня съ фіалками» պիէսը։

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Դերասան Աբէլեանի խումբը ներկայումս գտնւում է Երևանում, ուր նա արդէն տուել է մեծ աջողութեամբ մի շարք ներկայացումներ։ Ինքնուրոյն պիէսներից մինչև այժմ խաղացուել են Շիրվանզադէի «Պատուի համար», «Չար ոգին», «Կործանուածը» և «Նամուսը»։ Խումբը առաջիկայ շաբաթ մտադիր է անցնել Գանձակ։

◆ Մի խումբ դերասաններ տիկ. Մայսուրեանի և պ. Սեւումեանի ղեկավարութեամբ կազմել են առանձին խումբ ամբողջ տարի առանց ընդհատման Թիֆլիսում և գաւառներում ներկայացումներ տալու նպատակով։

Խումբն իր գործունէութիւնը կը սկսի այս օրերս Թիֆլիսում։ Ռեպերտուարը բաղկացած է բացառապէս ինքնօրոյն պիէսներից։

◆ Հայ Դրամատիկական Ընկերութեան վարչութիւնը արդէն վերցրել է Արտիստական ընկերութեան Թատրոնի երկուշաբթի օրերը առաջիկայ սեզոնի համար։

◆ Բագւի կուլտուրական միութեան գեղարուեստական սեկցիան առաջիկայ սեզոնի համար հայ դերասանական խմբի կազմակերպումը որոշել է յանձնել Աբէլեանին։

ՄԱՄՈՒԼ

ԹՈՒՐՔ ԹԵՐԹԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւրքերը դարձեալ սկսում են ջարդել երկրի մէջ բնակվող խաղաղ ազգաբնակութիւնը, մասնաւորապէս հայերին. սուլթան Աբդիւլ Համիդի արիւնաներկ օրերը դարձեալ ետ են դարձել, և խեղճ, անմեղ և խաղաղ հայերը կոտորվում են ամեն տեղ... Հայերն էլ, այս մասին խորհրդակցելով Թիֆլիսի իրանց ժողովներում, որոշել են Կաթողիկոսի միջոցով բոլոր քաղաքակիրթ երկիրներին դիմում անել, որ Թիւրքերի այս վայրենութիւնների առաջը առնվի։

Հայերի կրթական հաստատութիւնները, գրողները, խմբագիրները, մտաւորականները, գիտական հաստատութիւնները այս երևոյթը տեղեկացնելու են։

Բայց աւաղ որ Թիւրքերը, որոնք իրանց սովորութիւն են դարձրել այդ վայրենութիւնները, ձեռք չեն քաշելու այդ խաղաղ հայերից, և նրանց վայրենութիւնը հետզհետէ աւելի սաստկանալու է. Նրանց միայն նպատակակէտն է վայերին ամբողջապէս և շուտով հեռացնել թէ Եւրոպայից և թէ Ասիայից... Եթէ այսպէս չը լինի, հայերը և սրանց նման խաղաղ ժողովուրդները ոչ մի ժամանակ Թիւրքերի ձեռքից հանգըստանալու չեն... («Սէդայի Հակկ»)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ

Մկրտիչ վրդ. Աբգարեանին

Դուք, հայր-սուրբ, «Մշակի» № 71-ի մէջ ինձ չը գոհացրիք ձեր չորս կէտերից բաղկացած պատասխանովը։ Դուք պարտաւոր էիք հայ-լուսաւորչականներին ցոյց տալ ձեր վարմունքն արդարացնող «հիմունք և օրէնք»։ Երկրորդական դատողութիւններով խճողում էք պարզ դրած խնդիրը։

Դուք երևի մոռացել էք մեր խօսակցութիւնը։ Երբ ես խնդրեցի ներկայ լինել ձեր ժողովին, դուք ինձ իսկոյն հարց ուղղեցիք.

— Դուք կաթոլիկ էք։

Ձեզ պատասխանեցի.

—Ո՛չ, ես հայ-լուսաւորչական եմ։

Անհա սրանից յետոյ յայտնեցիք՝

—Այլազգիներին չեմ կարող թոյլ տալ, խնդրեմ չը նեղանաք։

Ես ուղղեցի ձեր խօսքը ըստ իմ համոզման.

—Հայր սուրբ,—ասի,—դուցէ ուզում էք ասել այլադաւան, որովհետև ես այլազգի չեմ։

Դուք աւելացրիք ու կարճ կապեցիք.

—Այո, այդ միևնոյն է։

Այժմ կարծեմ յիշեցիք մեր խօսակցութեան մանրամասնութիւնը։ «Այլադաւան» բառը իմ արտասանածն է, իսկ դուք ընդունում էք այլազգի և այլադաւան խօսքերը իբրև համանիշ. այդ ձեր համոզմունքն է, ինչպէս և ձեր համոզմունքն է արգելել հայ-կաթոլիկներին յաճախելու հայ-լուսաւորչականների եկեղեցիներն ու ուխտատեղիները։ Այս վերջին ասածիս վկայ է նոյնպէս հայ-կաթոլիկ Օ. Կ.-ն։ Ձեր այդ համոզմունքը իսկի հրապարակ գալու բան չէ. դուք ինքներդ էլ այդ զգում էք, ուստի և ձեզ արդարացնում էք հայ ազգի առաջ թէ՝ «այդ անգամվայ ձեր ժողովի զարտուղութիւնը ունէր իր առանձին պատճառը», զոր (իմա. պատճառը) դիւրաւ կարող չեղայ ըմբռնել—խոստովանում եմ։

Եթէ իսկապէս ձեր ժողովը մի մասնակի ընտանեկան բնոյթ ունենար, ծանօթս հայ կաթոլիկները ինձ չէին հրաւիրի թէ՝ «եկէք, շատ հետաքրքրական ժողով ունենք, որ դռնբաց է լինելու, դի այնտեղ հրաւիրված են Թիֆլիսի բոլոր ծխական և ոչ ծխական հայ կաթոլիկները»։ Ես էլ հետաքրքրվեցի եկայ և, քաղաքավարութեան օրէնքը պահպանած լինելու համար, մօտեցայ ձեզ թոյլտւութիւն խնդրելու՝ իբրև լուսաւորչական։ Ձեր արգելքը՝ թէ ինձ և թէ ծխականներիդ համար անսպասելի եղաւ։

Իբրև նախագահի՝ ինձ մերժելներդ ձեր անկապտելի իրաւունքն էր, սակայն ես «պատուական ձևով» ներկայ լինելս չը պնդեցի, որի մասին ակնարկում էք ձեր պատասխանի մէջ։ Ո՛չ, քաւ լիցի։ Ես միայն ձեզանից բացատրութիւն պահանջելս պնդեցի, որովհետև խնդիրը սկզբունքային է և շատ կարևոր տարագիր ու ցրված ազգիս միութեան համար։ Շահան-Սիման

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

(Սեփ. Թղթակցից)

Ղազվին, 6 ապրիլի

Քիրմանշահի գաւառի պաշտօնական հեռագրից երևում է, որ օսմ. զօրքեր են կենտրոնացել սահմանի վրա գտնվող պարսկական Կասր-Շիրինում. Թէ ի՛նչ նպատակով, յայտնի չէ։ Կառավարութիւնը սա այժմ հեռագրել է Քիրմանշահի գաւառին ամեն կերպ նրանց առաջխաղացութեան արգելք լինել՝ մինչև ցնոր կարգադրութիւն։ Այժմ հարց է, թէ ի՛նչ ոյժերով պիտի նրանց դիմադրեն։ 150 հոգի պարսկական կօզակներ, կարծես զգալով մօտալուտ դաւը, արդէն թողել-եկել են Համադան։ Օսմ. ոյժերի թիւը յայտնի չէ. միայն, ըստ պատող լուրերի, 4000 հոգի է, որը կասկածելի է ի հարկէ։

Նոյնպէս պաշտօնապէս հաստատված է, որ Քիրմանշահ գերմանական և աւստրիական դեսպանների հետ եկել են գերմանացի օֆիցէրներ և մեծ քանակութեամբ ռազմամթերք. ըստ պատող լուրերի՝ 40,000 հրացան է բերված Քիրմանշահի մաքսատունը։

Պարսկական Քիւրդստանում այժմ ամենուրեք լիքն են թիւրք և գերմանացի պրոպագանդիստներով և օֆիցէրներով, որոնք գրգռում են քիւրդերին մասնակցել սրբազան պատերազմին, խոստանալով և՛ զէնք, և՛ փող, և՛ կազմակերպիչներ, և պիտի ասել՝ վախ կայ որ շուտով այդ շրջանը բոլորովին վտանգվի։ Արդէն քրիստոնեաները հեռացան այդ շրջանից։

Ամիր Հէշմաթը և Մուխտար-փաշան այժմ փառաւորապէս «չէզոքութիւն պահպանող» կառավարութեան մայրաքաղաքում օսմ. դեսպանատան մէջ բազմած գործում են։ Թաւրիզից շատ ֆէդայիներ, լսելով Ամիր Հէշմաթի Թէհրան լինելը, շտապում են Թէհրան՝ միանալու նրա ձեռնարկութիւններին։

Նոյնպէս մէկը միւսի ետևից Թէհրան են համնում գերմանացի օֆիցէրներ և ուսումնասիրողներ. Թէ ինչո՛ւ՝ ի հարկէ բոլորին էլ պարզ է. կազմակերպելու համար պարսկական ոյժերը և հանելու Ռուսաստանի և Անգլիայի դէմ, եթէ կարելի լինի։

Կառավարութիւնը թէև խոստանում է պահպանել չէզոքութիւն, բայց դժուար թէ նրան աջողվի զսպել այն անզուսպ ոգևորութիւնը, որ ներկայումս տիրում է յօգուտ պատերազմի, քանի որ ինքը կառավարութիւնը չափազանց անզօր է այդ անելու։ Իսկ մամուլը հսկայական սուտերով բարձր է պահում ընդհանուրի սորկացած ոգին և մղում է նրան դէպի ոգևորութիւն։ Վարշավան ու Բաթումը որպէս թէ գերմանացիք վերցրել են արդէն, իսկ անգլիական նաւերը որպէս թէ թղթից շինված լինէին, արդէն բոլորը խորտակվել են, իսկ Հնդկաստանը ապստամբվել է և Անգլիան ճարահատեալ եապոնական զօրքեր է բերել տալել. և ո՛չ Ռուսաստանում, ո՛չ Անգլիայում և ո՛չ էլ Ֆրանսիայում կենդանութիւն չի մնացել, ուստի հեշտ է ժամը հաշուել մաքրելու դրանց հետ...

Ժանդարմէրիան, որ տակաւին գտնվում է շվէդացի օֆիցէրների ձեռքում, մեծ ոգևորութեամբ ժանդարմներ է վարձում և վարժեցնում, իսկ փողը որտեղից է վճարվում, դա դեռ գաղտնիք է։

Բանկային հաստատութիւնները և հիւպատոսարանները Քիրմանշահից փոխադրվեցին Համադան, իսկ այնտեղից էլ արդէն սկսվել է առաքումը արխիվների և դրամների դէպի Ղազվին-Ռաշտ։

Եկան իտալական, անգլիական, աւստրիական և գերմանական նոր նշանակված դեսպանները. սպասվում է այս շաբաթվայ մէջ նաև ռուսական նոր դեսպանը։

Մի կողմից ռազմի շեփոր են ուզում հնչեցնել մեր երկրի անհանգիստ տարրերը, միւս կողմից փողի սով է պետական հաստատութիւնների մէջ. գործադուլը խրոնիկական ցաւ է դարձել. այս շաբաթվայ մէջ Թէհրանի ոստիկանները գործադուլ արեցին. գիշերը ոստիկանները իրանց գործին կանգնած չը լինելով, քաղաքում և շուկայում գողութիւններ տեղի ունեցան, որի հետևանքով վաճառականները թափվեցին մինիստրների ժողովը և պահանջեցին ոստիկանութեանը. մի կերպ կարգի դրվեց, որով դեռ ոստիկանութիւնը եկաւ գործի։ Մէկ ամիս առաջ ներքին գործերի մինիստրի ճառից, որ արտասանեց մէջլիսում, երևում էր, որ ոստիկանութեան մնացած ռոճիկը 93,000 թումանի և ժանդարմերիայի մնացած ռոճիկը 325 հազարի էր հասնում։

Ս. Հովեան

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սուր լսողութիւն.—Մի ֆրանսիացի օֆիցէր իր մի քանի ընկերների հետ աչքից անց էր կացնում մի գիւղ, որը գերմանացիք լքել էին իրանց գահավէժ փախուստի ժամանակ։ Բոլոր սենեակները զգուշութեամբ զննվում են. ամեն ինչ կողոպտված, տարված է, երևում են միայն աւերակներ ու կեղտոտութիւններ։

Յանկարծ օֆիցէրը, լսելու համար վիզը մի կողմն է երկարացնում ու մրմնջում՝ մի մատը դնելով շրթունքների վրա.

— Մ՛ս, ինչ-որ ձայն եմ լսում։

Միւսները անշարժ ու լուռ կանգնում են և ականջները մի կողմ դարձրած՝ աշխատում են լուռ լսել, սակայն ոչ մի շշուկ չի համնում ականջներին, ուսերը շարժում են ու ժպտում։

Օֆիցէրը անդրդուելի կերպով պնդում է.

— Ձեզ ասում եմ՝ այս տան մէջ խօսում են։

Ճիշդ է, տան շուրջը՝ ամեն տեղ նայել զննել էին, բայց մառանի մի մութ նկուղը վրիպել էր նրանց հետախուզութիւնից։ Կամաց քայլերով իջնում են այնտեղ ու մթութեան մէջ նշմարում մի մարդ, որ չոքած, ցածր ձայնով տելեֆոնով խօսում էր։ Մի գերմանացի լրտես էր այդ. ատրճանակի երկու հարուածով փռում են նրան գետին, ու վերստին լռութիւն։

Մի քանի օր անց՝ այդ դէպքից յետոյ, դարձեալ նոյն օֆիցէրը ֆրանսիական մի դիրք էր աչքից անցկացնում, երբ յանկարծ բացագանչում է.

— Ձեր ոտքերի տակ փորում են։

Բոլոր զինուորներն էլ ականջները լարեցին սրտատրոփ, բայց ամենափոքր շշուկ անգամ չը լսեցին և ոչ իսկ փոքր հարուած։

— Զաւակներս, ձեր դիրքի տակ ական են դնում, ուշադրութի՛ւն, փախչենք։

Հազիւ թէ զինուորները դուրս են գալիս փոսից, և ահա դժոխային դղրդիւնով պայթում է ականն ու դիրքը օդը ցնդեցնում։

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3	դէպի Բաթում	1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4	» Բագու	7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ)	»	12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9	» Բաթում	8 ժ. 53 ր. երեկ.
	» Ջուլֆա	10 ժ. 23 ր. երեկ.
	» Բօրժօմ	3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3	Բագուից —	12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4	Բաթումից —	5 ժ. 55 ր. երեկ.
№ 5	Բագուից (արագ)	7 ժ. 41 ր. երեկ.
№ 10	Բաթումից —	9 ժ. 51 ր. առաւ.
	Ջուլֆայից —	6 ժ. 53 ր. առաւ.
	Բօրժօմից —	7 ժ. 25 ր. առաւ.

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմենովսկայա փող., № 18 (Վօրոնցովի արձանի մօտ)։ Բժշկի բնակարանը Սեմենովսկայա, № 16.
(հ. ու. կ.) 1018. 100—56

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1011. Центральная музыкальная торговля НАЗАРЯНЦЪ МИХАЙЛОВСКIЙ ПРОСП. 127 (կ.) 50—21

ՄԻ ԻՆՏԵԼԻԳԵՆՏ
հայ ընտանիքում վարձով տրվում են
ՄԻ ԿԱՄ ԵՐԿՈՒ ԿԱՀԱՒՈՐՎԱԾ
ՍԵՆԵԱԿՆԵՐ
ճաշով և առանց ճաշի։ Կայ նաև վաննա, որից կարելի է օգտվել։ Նոյն տեղը պատրաստում են աշակերտ - աշակերտուհիներ գիմնազիաների բոլոր դասարանների համար։ Հասցէն՝ Графская ул. № 7, վերին յարկ, բնակարան Ստեփանեանի։
241. 2—1

Հրաւէր

Այսօր, կիրակի, ապրիլի 19-ին, առաւօտեան ժամը 12-ին, Քամոյեան ս. Գէորգ եկեղեցում նշանակված է տարեկան ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Զբաղմունքի առարկաներն են.
1) 1914 թ. տարեկան հաշւի քննութիւն.
2) 1915 թ. նախահաշւի քննութիւն.
3) Վերստ. յանձն. մի անդամի ընտրութիւն.
5) Եկեղեցապատկան կրպակների վերաշինութեան հարցը։

Ծանօթ.—Առաջին չորս խնդիրների համար սա չորրորդ ժողովն է, իսկ վերջինի համար՝ առաջինը։ 236. 1—1

Ծախվում են

1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ» նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և ռեցեպտներով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանոններ տրիպէրով և այլ ցաւերով չը վարակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրոնիկական տրիպէրի և բժշկութեան մասին, ռեցեպտներով։ Գինը 50 կոպ.։

2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՋԵՒ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ։ Թունաւորութիւններ և նրանց շուտափոյթ օգնելը, Բազմաթիւ անպէտ դեղեր և խորհուրդներ։ Շատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրան և թէ ուրիշներին։ Գինը 30 կոպ.։

3) «ՇԻՐԱԶԻ ՏՂԱՌ» ամենալաւ և ծիծաղաշարժ անեկդոտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ ուխտի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.։

Այս երեք գիրքը միասին պահանջողներին

ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻԲՐ ՆՈՒԷՐ

երեք հետևեալ գրքերը. 1) «Ֆոնկարմանի շալվարը» ծիծաղաշարժ վօդեվիլ չափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Րաֆֆի» պատկերով (գ. 10 կ.), 3) «Միևնոյն գաղտնիք», պատմուածք հայ-թիւրքական կեանքից, գիւտակների նկարներով, գինն է 7 կ.

Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կոպ. առաջուց ուղարկել անպայման պէտք։ (Մարկաներ չը ընդունել, նամակներն պատասխանում, հակառակ դէպքում պատասխանատու չեմ ոչ մի կերպ։ Հասցէն՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаяну.
(հ.կ.) 327. 100—95

ПРИ ГОНОРРЕѢ
(ТРИППЕРѢ)
въ острой и хронической формѣ, а также ея послѣдствiяхъ
примѣняется средство
„АРМАТИНЪ"
для внутренняго употребленiя. «Арматинъ» совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленiи «Арматина» не требуется никакихъ спринцеванiй, промыванiй, прижиганiй, бужированiй и т. п. Курсъ леченiя около 6 кор.
Цѣна 1 кор. „Арматинъ" 1 р. 75 к.
Продажа въ аптекахъ и аптекарскихъ магазинахъ.
ПРЕДОСТЕРЕЖЕНIЕ:
Исключительный успѣхъ, выпавшiй на долю препарата «Арматинъ» А. Я. Акулiанца, вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ господъ покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать «Арматинъ» только А. Я. Акулiанца съ этикетомъ бѣлая ромашка.
(հ. կ.) 174. 0—8

ՄԻ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿ ՀԻՊՆՕՏԻԶՄ ԵՒ
ՆՈՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ
ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՆՑ ՈՒՍՈՒՑՉԻ.
Լոյս տեսաւ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԷՔԵՐՋԵԱՆԻ
«Մարդկային մտքի քաջագործութիւնը կամ գործնական հոգեբանութիւն» ձեռնարկը։



Այս նոր Ձեռնարկով ամեն ոք, ով հայերէն լեզուին ծանօթ է, կարող է սովորել հիպնօզացնել. ներշնչել և սովորել նոր հոգեբանութիւն, և գործադրել նրան իր ամենօրեայ գործերում։ Այս նոր Ձեռնարկի արժէքի և ուրիշ բացատրութիւնների համար պիտի դիմել նամակով հետևեալ հասցէով.
Ռուսաստանից—Сусаннѣ Шекерджянъ, Вельяминовская ул. № 22, Тифлисъ. Արտասահմանից—Sousanna Shekerjian, 22 Weliaminovskaya, Tiflis, Caucasus, Russia.
(կ.) 106. 25—7

Թիֆլիսի Առևտրական Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը
սրանով խնդրում է պ. պ. բաժնետէրերին ներկայ լինել
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ,
որ տեղի կունենայ, ներկայ 1915 թ. ապրիլի 19-ին, առաւօտեան ժամը 11-ին, Թիֆլիսի Բօրսայի շինութեան մէջ (Պուշկինսկի փող. № 5)։

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.
1) Վարչութեան զեկուցումը.
2) Վարչութեան զեկուցումից առաջացող հարցերի վճիռը.
3) Վերստուգող յանձնաժողովի զեկուցումը.
4) Քննութիւն և հաստատութիւն 1914 թ. հաշւի և հաշւեկշռի.
5) 1915 թւի ծախքերի նախահաշիւը և գործունէութեան նախագիծը.
6) Կարգաւորումն 1914 թ. օգուտների.
7) Վարչութեան մէկ անդամի ընտրութիւն՝ ի տեղի հերթով հեռացող անդամի, և վարչութեան մէկ անդամի թեկնածուի ընտրութիւն.
8) Վերստուգող յանձնաժողովի 5 անդամների ընտրութիւն.

Եթէ ընդհանուր ժողովը չը կայանայ պահանջված ձայների թւի պակասութեան պատճառով, այդ դէպքում երկրորդ ժողովը կը նշանակվի մայիսի 5-ին 1915 թ. նոյն տեղում, առաւօտեան ժամը 11-ին, որպիսի ժողովը կը համարվի օրինական՝ որքան անդամ էլ ներկայ լինի։

Վարչութիւնը պ. պ. բաժնետէրերի ուշադրութիւնն է հրաւիրում Ընկերութեան կանոնադրութեան § 59-ի վրա։

Անուանական ակցիաների տէրերը օգտվում են Ընդհանուր Ժողովում ձայների իրաւունքով միայն այն դէպքում եթէ նրանք, գոնէ 7 օր առաջ մինչև Ընդհանուր Ժողովի օրը՝ մուծված են վարչութեան մատեանների մէջ, որի համար և Ընդհանուր ժողովին մասնակցելիս չէ պահանջվում ներկայացնել անուանական ակցիաները։

Ակցիաները ներկայացնողին ձայնի իրաւունք է տրվում այն դէպքում, եթէ նոյն ակցիաները ներկայացված են Ընկերութեան վարչութեանը՝ գոնէ 7 օր առաջ մինչև Ընդհանուր Ժողովի օրը և յետ տրված մինչև Ժողովի աւարտը։ Բնագիր ակցիաների փոխարէն կարելի է ներկայացնել վկայագրեր (ստացագրեր) ակցիաներն ի պահեստ կամ գրաւ դրված լինելու համար ինչպէս պետական, նոյնպէս և կառավարութեան հաստատած կանոնների հիման վրա գործող կրէդիտային (տեղական և օտար քաղաքների) հիմնարկութիւնների, այլ և արտասահմանեան կրէդիտային հիմնարկութիւնների և բանկային տների կողմից ստացված, որոնք ընտրված կը լինեն բաժնետէրերի Ընդհանուր Ժողովներից և հաւանութիւն գտած ֆինանսների մինիստրութիւնից։ Վկայագրերի մէջ պէտք է նշանակված լինեն ակցիաների համարները։ Արտասահմանեան բանկային հիմնարկութիւնները, որոնց վկայագրերը կարելի է ներկայացնել փոխարէն բնագիր-ակցիաների, պէտք է նշանակված լինեն Ընդհանուր Ժողովի հրաւէր-յայտարարութիւնների մէջ։

Միաժամանակ վարչութիւնը վաղօրօք յայտնում է պ. պ. բաժնետէրերին, որ ձայնի իրաւունք ունենալու համար տրված հաւատարմագրերը և գրաւոր յայտագրերը պէտք է ներկայացված լինեն վարչութեանը բաժնետէրերի Ընդհանուր Ժողովից 7 օր առաջ, Ընկ. վարչութեան գրասենեակին, ցեր. ժամը 11—1-ը։ (12, 19) 187. 3—3

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բագու, Կրասնօվօդսկայա փ. տ. Աւան-Իզբաշեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-50.

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս ԴԻԶԵԼ շարժիչներ (մոտորներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։

Հօրիզօնական անգլիական շարժիչներ, (մոտորներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. Նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ոյժին ½ ֆունտ կամ 200 գրամ։

Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։

Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։

Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։

Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիքս» ընկ. գործարանից։

Ամեն տեսակ էլեքտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից։

Երկրագործական մեքենաներ՝ լոկոմոբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտորներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։

Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։

Դիմել՝ Баку. Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur
(հ.կ.) 551. 0—89

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лоирсъ-Меликовская улица, домъ казенный.